

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԲԱՐԵԿԱՐԳ ԵՎ ՈՐԱԿՅԱԼ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

մոնիտորինգի արդյունքներ

4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ

3

ԲԱՅԱՐԱՅՏԿԱԾ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԹՈՒՄԸ

2

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

1

ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյուլմրի, 2019թ.



Ուսումնասիրությունն իրականացվել է «Մասնակցային մոնիտորինգ՝ հանուն բարեկարգ և որակյալ ճանապարհների Գյումրիում» ծրագրի շրջանակում

**«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ
Ք. Գյումրի, Անկախության հրապ. 9^ա շ., 3-րդ հարկ, 301 սենյակ
Հեռ.՝ (+374) 312 6 01 00, (+374) 95 16 01 00, Էլ. փոստ՝ compassgyumri@gmail.com
Կայքէջ՝ <http://compass-center.org>**

Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատու է «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Բովանդակություն

Կիրառված եզրույթներ.....	4
Հապավումներ.....	6
Համառոտագիր.....	7
Ներածություն.....	9
Մեթոդաբանություն.....	10
ԲԱԺԻՆ 1. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ.....	12
1.1 Ներհամայնքային ճանապարհների վերակառուցման գործող չափորոշիչներ.....	12
1.2 Իրավական կարգավորումներ.....	16
1.3 Կառուցապատման ընթացակարգ.....	20
1.4 Աշխատանքի պաշտպանություն և շրջակա միջավայրի պահպանության կանոններ.....	22
ԲԱԺԻՆ 2. ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՓՈՂՈՑԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	24
2.1 Փողոցաշինության ոլորտում Գյումրու համայնքային բյուջեից հատկացված ծախսերի վերլուծություն.....	24
2.2 Հիմնանորոգված և ընթացիկ փոսալցումներ իրականացված փողոցների ուսումնասիրություն՝ ըստ իրականացված ծախսերի և կազմակերպությունների.....	27
ԲԱԺԻՆ 3. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	32
3.1 Մասնակցային մոնիտորինգի իրականացման մեթոդաբանություն.....	32
3.2 Քաղաքացի-մոնիտորների վերապատրաստում.....	33
3.3 Փողոցաշինական աշխատանքների դիտարկման արդյունքներ.....	34
3.3.1 Շինարարական աշխատանքների ընթացքում նորմատիվային պահանջների պահպանման մշտադիտարկման արդյունքներ.....	34
3.3.2 Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անվտանգության և բնապահպանական նորմերի պահպանման դիտարկում.....	46
3.3.3 Շինարարության հրապարակներում ներգրավված աշխատակիցների հետ հարցումների արդյունքներ.....	51
3.3.4 Վերանորոգված փողոցների ասֆալտաբետոնե ծածկից վերցված հանուկների լաբորատոր փորձաքննության արդյունքներ.....	53
ԲԱԺԻՆ 4. ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ. ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ.....	56
4.1 Առանցքային խմբի աշխատանքի սկզբունքները.....	56
4.2 Հանրային քննարկումներ և առաջարկությունների ներկայացում.....	57

Եզրահանգումներ.....	60
Առաջարկություններ	63
Հավելված 1. Մոնիտորինգային ստուգաթերթ.....	67
Հավելված 2. Շինարարության հրապարակում ներգրավված աշխատակիցների հետ հարցման հարցաթերթ	73
Հավելված 3. Մոնիտորինգի ուղեցույց	75
Հավելված 4. Մոնիտորինգի ենթարկված հինգ փողոցների տեղանքների քարտեզ.....	79

Կիրառված եզրույթներ

Հողային պաստառ	Օտարման շերտի այն մասը, որտեղ կատարվում են հողային աշխատանքներ՝ երթևեկելի մասի, կողնակների, կողային առունների, լիցքի և հանույթի շեպերի մակերեսները միասին:
Երթևեկային մաս	Ճանապարհի մակերևույթի շերտ, որի սահմաններում կատարվում է ավտոմոբիլային երթևեկությունը:
Կողնակ	Երթևեկային մասի երկու կողմերից ավտոմոբիլների կայանման և ճանապարհի նորոգման համար շինանյութերի տեղավորման նախատեսված շերտեր:
Մայրեր	Հետիոտների շարժման համար նախատեսված, երթևեկելի մասին հարող կամ դրանից կանաչապատված գոտիով առանձնացված ճանապարհի տարր, որն առանձնացված է եզրաքարերով:
Շինարարական նորմեր	Շինարարության ոլորտի նորմատիվ տեխնիկական փաստաթուղթ՝ հաստատված քաղաքաշինության բնագավառի լիազոր պետական կառավարման մարմնի (այսուհետև՝ համակարգող մարմին) կողմից, որում պարունակվում են պարտադիր կիրառման սկզբունքով շինարարության արտադրանքներին, ինչպես նաև դրանց հետ կապված գործընթացներին ներկայացվող պահանջներ:
Նախագծման և շինարարության կանոնների հավաքածու	Շինարարության ոլորտի նորմատիվ փաստաթուղթ՝ հաստատված մշակող կազմակերպության կողմից, հավանության արժանացած համակարգող մարմնի կողմից, որում պարունակվում են կամավոր կիրառման սկզբունքով տեխնիկական կանոններ և նախագծային լուծումներ, ինչպես նաև շինարարական արտադրանքների ինժեներական հետազոտման, նախագծման, շինարարության կամ շահագործման ընթացակարգեր՝ տեխնիկական կանոնակարգերով և (կամ) շինարարական նորմերով դրանց ներկայացվող պարտադիր պահանջներին հասնելու համար որոշակի միջոցներ:
Ստանդարտ	Իրավասու մարմնի կողմից ընդունված փաստաթուղթ, որով սահմանվում են համընդհանուր և բազմակի կիրառման համար կանոններ, ցուցումներ կամ արտադրանքի բնութագրեր կամ արտադրանքի հետ կապված արտադրման գործընթացներ և մեթոդներ, որոնց համապատասխանությունը պարտադիր չէ: Այն կարող է ընդգրկել նաև տեքմինաբանությանը, փաթեթավորմանը, պայմանանշաններին, արտադրանքի մակնշմանը կամ պիտակավորմանը ներկայացվող պահանջներ:

- Անվտանգություն** Մարդու կյանքի, առողջության, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքի, կենդանիների և բույսերի կյանքի և առողջության, շրջակա միջավայրի պաշտպանությանը վնաս հասցնելու հնարավորության հետ կապված անթույլատրելի ռիսկի բացակայություն:
- Ռիսկ** Որոշակի ժամանակահատվածի ընթացքում տեխնիկական կանոնակարգման օբյեկտի բացասական ազդեցության հետևանքների ի հայտ գալու հնարավորություն և տարածման հնարավոր ծավալներ:
- Մոնիտորինգ** Իրականացվող միջոցառումների պարբերական վերահսկում, որի նպատակն է ուսումնասիրել, թե որքանով են միջոցառումները, դրանց իրականացման ժամկետները և սահմանված թիրախներն իրագործվում նախատեսված պլաններին համաձայն:

Հապավումներ

ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

Համառոտագիր

«Մասնակցային մոնիտորինգ՝ հանուն բարեկարգ և որակյալ ճանապարհների Գյումրիում» ծրագիրն իրականացվել է ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ի (այսուհետ՝ «Կոմպասս» կենտրոն) կողմից: Ուսումնասիրությունը հնարավոր է դարձել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն ուղղված է եղել բարձրացնելու Գյումրի քաղաքում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից տրված վարկային միջոցների շրջանակներում իրականացվող փողոցաշինության աշխատանքների որակը:

Մոնիտորինգի խնդիրներն են՝

1. Շինարարական աշխատանքների որակի վերահսկում

- Վերահսկել վերակառուցման ենթակա փողոցների ճանապարհային պատվածքի շերտերի համապատասխանությունը սահմանված նորմատիվային չափորոշիչներին և նախագծային լուծումներին
- Վերահսկել վերակառուցման ենթակա փողոցների մայթերի և եզրաքարերի իրականացման համապատասխանությունը սահմանված նորմատիվային չափորոշիչներին և նախագծային լուծումներին
- Վերահսկել վերակառուցման ենթակա փողոցներում իրականացվող ասֆալտի ջերմաստիճանի համապատասխանությունը նորմատիվային չափորոշիչին:

2. Շինարարական աշխատանքների կազմակերպում և անվտանգություն

- Վերահսկել շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անվտանգության նորմերի պահպանությունը, այդ թվում՝
 - Երթևեկության կազմակերպման անվտանգությունը
 - Աշխատակիցների անվտանգությունը
 - Բնապահպանական անվտանգությունը:

Մասնակցային մոնիտորինգի արդյունքում ակնկալվում է ունենալ՝

- Շինարարական որակի բարձրացում և շինարարական աշխատանքների կազմակերպման թափանցիկության աճ՝ շինարարության որակի հետ կապված արձանագրված խնդիրների և բացթողումների բարձրաձայնման և լուծումների առաջադրման միջոցով
- Շինարարական աշխատանքների կազմակերպման անվտանգության բարձրացում աշխատանքներն իրականացնողների, երթևեկության մասնակիցների և բնակիչների համար
- Փողոցաշինության աշխատանքների որակի վերահսկման վերաբերյալ քաղաքացի-մոնիթորների գիտելիքների և հմտությունների բարձրացում
- Փողոցաշինության աշխատանքների վերահսկողության գործընթացում հանրության ներգրավման մակարդակի բարձրացում:

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել և զեկույցում հակիրճ ներկայացվել են ներպետական այն օրենքները և դրանցից ածանցվող այլ իրավական ակտերը, որոնց պահանջների պահպանումն անհրաժեշտ

է ՎԶԵԲ-ի ծրագրով իրականացվող Գյումրի քաղաքում ճանապարհների բարեկարգման գործընթացի օրինականության ապահովման համար: Ուսումնասիրվել են ՎԶԵԲ-ի հետ կնքված համաձայնագրերը, կապալառու կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերը, գնումների գործընթացը կարգավորող օրենսդրությունը, աշխատանքային իրավահարաբերությունները՝ աշխատանքի անվտանգության տեսանկյունից, ինչպես նաև շրջակա միջավայրի անվտանգության պահպանումն ապահովող իրավական ակտերը: Տեղեկատվության հարցումներ են ուղարկվել ՀՀ Ֆինանսների նախարարությանը և Գյումրու համայնքապետարանին և հավաքագրվել այն նյութերը, որոնք անհրաժեշտ են եղել փաստաթղթերի ուսումնասիրության փուլում:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև փողոցների շինարարական աշխատանքների մասնակցային մոնիտորինգ, որի նպատակն է եղել նպաստել իրականացվող շինարարական աշխատանքների համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին և նախագծերին: Սույն հաշվետվությունում ամփոփված են փողոցների վերակառուցման աշխատանքների մոնիտորինգի արդյունքները: Մոնիտորինգային աշխատանքների ընթացքում ձևավորվել է համայնքի երիտասարդ բնակիչներից բաղկացած 15 հոգանոց մոնիտորինգային խումբ, որն իրականացրել է այցելություններ շինարարության վայրեր՝ համաձայն նախապես մշակված մշտադիտարկման պլանի: Մոնիտորինգի իրականացման համար ընտրվել են բոլոր երեք շինարարական կազմակերպությունների կողմից վերակառուցվող առնվազն մեկ փողոց: Ընդհանուր առմամբ, մոնիտորինգ է իրականացվել 5 փողոցում: Մոնիտորինգային խումբն ուսումնասիրել է կառուցվող ճանապարհային պատվածքի շերտերի հաստությունները, իրականացվող ասֆալտի ջերմաստիճանը, եզրաքարերի բարձրությունները և տեղադրումը, մայրերի հաստությունները, շինհրապարակի կազմակերպվածությունը և անվտանգության նորմերի պահպանությունը: Իրականացվել է նաև լաբորատոր փորձաքննություն ծրագրով Գյումրիում հիմնանորոգված երկու փողոցներում, որոնցից վերցվել են ասֆալտաբետոնե շերտի հանուկներ, որոնք փորձաքննության են ենթարկվել անկախ փորձագիտական ընկերությունում: Ծրագրի շրջանակներում ձևավորվել է նաև առանցքային խումբ, որը պատասխանատու է մոնիտորինգային աշխատանքների ընթացքում բացահայտված խնդիրների և բացթողումների վերհանման և հետագա լուծման հնարավորությունների որոնման համար:

Ներածություն

«Մասնակցային մոնիտորինգ՝ հանուն բարեկարգ և որակյալ ճանապարհների Գյումրիում» ծրագիրն իրականացվել է ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ի (այսուհետ՝ «Կոմպասս» կենտրոն) կողմից: Ուսումնասիրությունը հնարավոր է դարձել ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Գյումրիում փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը 2,2 մլն քմ է: Վերջին 4 տարիների կտրվածքով ոլորտին հատկացվում է Գյումրի քաղաքի բյուջեի մոտ 13-14%-ը, ինչը միջինացված կազմում է 450 մլն դրամ: Չնայած ցուցանիշը ՀՀ այլ քաղաքների հետ համեմատած բարձր է, սակայն արդյունքները հատկացված միջոցներին համապատասխան չեն, կան փողոցներ, որոնք տարիներ շարունակ չեն վերանորոգվում կամ խճապատվում: Ծայրամասային փողոցները հիմնականում հարթեցվում են, մինչդեռ բանուկ փողոցները ցածրորակ աշխատանքի պատճառով ամեն տարի ասֆալտապատվում են:

Վերջին տարիների ընթացքում զգալի աշխատանքներ են կատարվել փողոցաշինության ոլորտում: Սակայն կատարված ոչ բոլոր աշխատանքներն են որակյալ, իսկ ճանապարհների շահագործման ժամկետներն էլ կարճ են, ընդ որում, քաղաքացին սկանստես է լինում, թե ինչպես է ամեն տարի փոսալցված նույն տեղում փոսալցում կատարվում, իսկ ջրահեռացման համակարգերն էլ չեն ապահովում կատարված աշխատանքների արդյունավետությունը:

2018թ. ապրիլ ամսից Գյումրի քաղաքում մեկնարկել է մի շարք փողոցների և հրապարակների հիմնանորոգման աշխատանքներ՝ «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի շրջանակներում, որի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 23 840 000 եվրո, որից 14 600 000 մլն եվրո վարկային միջոցներ տրամադրվել են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) կողմից: Ծրագրի շրջանակներում ընդգրկված են շուրջ 12 փողոցներ և 3 հրապարակներ, իսկ շինարարական աշխատանքներն իրականացվում են 3 շինարարական կազմակերպությունների կողմից:

Վարկավորման հաշվին պայմանագրով նախատեսված աշխատանքների որակի ապահովումը, ըստ սահմանված չափանիշների և նախագծերի, ուսումնասիրման անհրաժեշտություն էր առաջացնում: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ինչպես նաև այն, որ Գյումրիում նշված ոլորտում որևէ համապարփակ ու մասնագիտական մոնիտորինգ երբևէ չի իրականացվել, արդիական է դառնում ոլորտի մասնակցային մոնիտորինգի և ճանապարհաշինական աշխատանքների որակի բարելավման հետազոտության անցկացումն ու դրանց լուծմանն ուղղված իրատեսական, կիրառելի և այլընտրանքային լուծումների մշակումը:

«Կոմպասս» կենտրոնը համայնքի բյուջեի միջոցների մոնիտորինգի ընդհանուր ռազմավարության շրջանակներում որոշում կայացրեց իրականացնել «Մասնակցային մոնիտորինգ՝ հանուն բարեկարգ և որակյալ ճանապարհների Գյումրիում» ծրագիրը:

Ձեկույցը կազմված է համառոտագրից, ներածությունից, մեթոդաբանությունից, երեք գլուխներից, առաջարկություններից, վերջաբանից և հավելվածներից:

Մեթոդաբանություն

Մասնակցային մոնիտորինգի հիմնական նպատակը փողոցաշինական աշխատանքների իրականացման ընթացքում տեխնիկական նորմերի պահպանման ապահովումն է: Այս նպատակով դաշտային աշխատանքներում ներգրավվել են թվով 15 քաղաքացի-մոնիթորներ և մեկ տեխնիկական հսկիչ-փորձագետ, որը դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում աջակցություն է ցույց տվել մոնիթորներին:

Ասֆալտապատման աշխատանքների մոնիտորինգն իրականացվել է դիտարկման և չափման մեթոդներով:

Դիտարկման և ենթարկվել շինարարության հրապարակում անվտանգության նորմերի պահպանությունը, շինհրապարակի կազմակերպումը, բնապահպանական նորմերի պահպանությունը, եզրաքարերի և սալիկների վիճակը:

Չափման և ենթարկվել նոր կառուցվող երթևեկելի մասի շերտերի հաստությունները, մայթերի հիմքերի հաստությունները, եզրաքարերի բարձրությունները, նոր փովող ասֆալտի ջերմաստիճանը: Չափումների համար քաղաքացի-մոնիթորները կիրառել են չափիչ սարքեր:

Մոնիտորինգի իրականացման համար մշակվել է մոնիտորինգային ստուգաթերթ, որը լրացվել է մոնիտորինգային խմբի կողմից՝ շինարարության հրապարակ յուրաքանչյուր այցի ընթացքում (Հավելված 1): Ընդհանուր առմամբ, մոնիտորինգային խմբի կողմից ընտրված հինգ փողոցներից յուրաքանչյուրում կատարել է շաբաթական 2 այց:

Աղյուսակ 1. Մոնիտորինգի ենթարկված փողոցներն ըստ շինկազմակերպությունների

Մոնիտորինգի ենթարկված փողոցի անվանում	Շինարարական կազմակերպության անվանում
1. Երևանյան խճուղի	«Մերձմոսկովյան» ԲԲԸ
2. Գարեգին Նժդեհի	«Սիսիանի ԲՈՒՍ» և «Վահագն և Սամվել» ՍՊԸ
3. Ջիվանու	«Մերձմոսկովյան» ԲԲԸ
4. Վազգեն Սարգսյան	«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ և «Էլեկտրասերվիս» ՍՊԸ համատեղ ձեռնարկություն
5. Մուշ 2 տանող ճանապարհ	«Մերձմոսկովյան» ԲԲԸ

Քաղաքացի-մոնիթորների վերապատրաստում

Քաղաքացի-մոնիթորներին ընտրությունն իրականացվել է մրցութային հայտարարության միջոցով: Ընտրված մոնիթորների վերապատրաստման համար կազմակերպվել է մեկօրյա դասընթաց, որի միջոցով մոնիթորները ստացել են մոնիտորինգ իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Դասընթացը բաղկացած է եղել տեսական և գործնական մասերից: Դասընթացի տեսական և գործնական մասերը, մասնավորապես, անդրադարձել են հետևյալ ոլորտներին՝

Տեսական մաս

- «Հանրությանը մատուցվող ծառայությունների մասնակցային մոնիտորինգ և սոցիալական հաշվետվողականության խթանում» ծրագրի նպատակը, կառուցվածքը
- Մասնակցային մոնիտորինգի հասկացությունը, նպատակը և գործիքները
- Մասնակցային մոնիտորինգի հարող հիմնական գաղափարները՝ հաշվետվողականություն, էթիկական վարքագիծ, կոռուպցիոն հսկողության մեխանիզմներ, «հորիզոնական հաշվետվողականության» համակարգ և այլն

- Մոնիտորինգի իրականացման մեթոդաբանությունը, մեթոդները և գործիքները,
- Տեխնիկական բնութագրերը և նորմատիվային չափորոշիչները, որոնք պետք է պահպանվեն շինարարության ընթացքում:

Գործնական մաս

- Գործնական դասընթացի ընթացքում քաղաքացի-մոնիթորները ծրագրի մոնիտորինգի համակարգողի և տեխնիկական հսկիչի ուղեկցությամբ այցելել են շինարարության վայր և տեղում ծանոթացել մոնիտորինգի ենթակա տարածքին, կիրառել մոնիտորինգային գործիքներ:

Շեշտադրվել է նաև այն հանգամանքը, որ քաղաքացի-մոնիթորները, ծրագրում ներգրավված լինելուց գատ, մոնիտորինգի ավարտից հետո տիրապետեն և ըմբռնեն ծրագրի նպատակներում ներդրված հետևյալ կարևոր ասպեկտները՝

- Կարևոր են մասնակցային մոնիտորինգի նշանակությունը որպես համայնքային հիմնախնդիրների լուծման գործիք
- Գիտակցեն, որ քաղաքացիների ներգրավումը գործընթաց է, որը պետք է շարունակական լինի՝ հնարավոր դարձնելով հարաբերությունների զարգացումը և ժամանակի ընթացքում վստահության կառուցումն ու ամրապնդումը:

Վերապատրաստման դասընթացի ավարտից հետո քաղաքացի-մոնիթորները լրացրել են դասընթացի արդյունավետության գնահատման և գիտելիքների ստուգման թեստ:

ԲԱԺԻՆ 1. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1.1 Ներհամայնքային ճանապարհների վերակառուցման գործող չափորոշիչներ

Ներհամայնքային ճանապարհների սպասարկման ապահովումը կատարվում է քաղաքաշինության նախարարի «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. հիմնական դրույթներ ՀՀՇՆ 10-01-2014» 2014թ. ապրիլի 25-ի N65-Ն հրամանով¹, որի ՀՀՇՆ IV-11.05.02-99 նորմերը տարածվում են ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների նախագծման և կառուցման վրա (գործարկվել է 2000թ. ապրիլի 1-ից): Շինարարական նորմերը տարածվում են Հայաստանի Հանրապետության նոր կառուցվող և վերակառուցվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և արդյունաբերական ձեռնարկությունների մատուցային ճանապարհների նախագծման և կառուցման վրա: Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ ավտոմոբիլային ճանապարհները, կախված երթևեկության հաշվարկային ինտենսիվությունից և գործառնական նշանակությունից, ստորաբաժանվում են ըստ Աղյուսակ 2-ում ներկայացված կարգերի:

Աղյուսակ 2. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կարգերը

Ճանապարհների կարգը	Երթևեկության հաշվարկային ինտենսիվությունը	Ավտոմոբիլային ճանապարհների գործառնական նշանակությունը
	Տրանսպորտային միավորներով ավտո/օր	
I	ավելի, քան 9000	Միջպետական նշանակության ճանապարհներ, որոնք ապահովում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ճանապարհային ցանցերի հետ կապելը՝ ապահովելով միջազգային տրանսպորտային կապերը:
II	ավելի, քան 4500 մինչև 9000	Միջպետական (I-ին կարգին չվերաբերող) և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ, որոնք կապում են մարզերի վարչական կենտրոնները և այլ քաղաքները ՀՀ մայրաքաղաքի և միմյանց հետ, ինչպես նաև մշակութային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ճանապարհների հետ:
III	ավելի, քան 1500 մինչև 4500	Միջպետական, հանրապետական (I և II-ին չվերաբերող) և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ
IV	մինչև 1500	Տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ, որոնք կապում են ՀՀ գյուղական բնակավայրերը միմյանց, մարզերի վարչական կենտրոնների, այլ քաղաքների, միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հետ:

Ավտոճանապարհների իրականացման սկիզբը հողային պաստառի կառուցումն է: Հողային պաստառի լայնությունը միջհամայնքային ճանապարհներում սահմանված է 9,6-11,4 մետր: Ներհամայնքային ճանապարհներում լայնությունը փոփոխական է՝ կախված փողոցի նշանակությունից (գլխավոր և երկրորդական փողոցներ): Հողային պաստառը կառուցելիս հեռացվում է բնահողի բերրի շերտը (սևահողը): Պաստառը իրականացվում է այնպիսի գրունտներով, որոնք ապահովում են ամրություն և

¹ 2014թ. ապրիլի 25-ի Քաղաքաշինության նախարարի թիվ 65-Ն հրաման

կայունություն: Պաստառը խտացվում է ըստ շերտերի՝ ջրի առկայությամբ: Հողային պաստառ կառուցելիս հաշվի են առնվում տեղանքի ռելիեֆը, լայնական և երկայնական թեքությունները, գրունտների խոնավության աստիճանը, ջրահեռացման ապահովումը:

Հողային պաստառի կառուցումից հետո իրականացվում են երթևեկելի մասի շերտերը: Ճանապարհային պատվածքի կոնստրուկցիան և նրա ծածկի տեսակը ընտրվում է՝ ելնելով տրանսպորտային միջոցների և ճանապարհի շահագործման պահանջներից, ճանապարհի կարգից՝ հաշվի առնելով երթևեկության ինտենսիվությունն ու կազմը, կլիմայական պայմանները, սանիտարաբարապահական պահանջները, ինչպես նաև կառուցման շրջանի տեղական շինանյութերով ապահովվածությունը: Ճանապարհային պատվածքները կարող են բաղկացած լինեն մեկ կամ մի քանի շերտերից: Բազմաշերտ պատվածքները բաղկացած են ծածկից, հիմքից և հիմքի լրացուցիչ շերտից՝ ցրտապաշտպան, ջերմամեկուսիչ, ցամաքեցնող ու հարթեցնող:

Ներկայացնենք երթևեկելի մասի (հիմնանորոգվող ճանապարհի) միաշերտ ասֆալտաբետոնով և երկշերտ ասֆալտաբետոնով ավտոճանապարհների շերտերը.

• Միաշերտ ասֆալտաբետոնե ավտոճանապարհ

ա) Ավազակոպճային շերտը տեղական բնական նյութերով ամրացված գրունտային շերտն է: Այս շերտի հաստությունը կազմում է երթևեկելի մասի ընդհանուր շերտի հաստության 30-40%-ը (Աղյուսակ 2):

բ) Խճային հիմքը կազմված է խճային նախաշերտից և բիտումով տոգորված խճային հիմքից: Խճային նախաշերտի հաստությունը կազմում է երթևեկելի մասի ընդհանուր շերտի հաստության 25-30%-ը: Խճային շերտը տոգորված է բիտումով, որի համար 1մ² խճային հիմքին ծախսվում է 4,12 կգ բիտում: Խճային հիմքի հաստությունը կազմում է ընդհանուր հաստության 20-25%-ը (Աղյուսակ 2):

գ) Միաշերտ ասֆալտաբետոնը երթևեկելի մասի վերին շերտն է (մանրահատիկ): Այս շերտի հաստությունը կազմում է երթևեկելի մասի ընդհանուր շերտի հաստության 12-25%-ը (Աղյուսակ 2):

• Երկշերտ ասֆալտաբետոնով ավտոճանապարհ

ա) և բ) շերտերի հաստությունները նույնն են, ինչ միաշերտ ասֆալտաբետոնե ճանապարհի դեպքում (Աղյուսակ 2):

գ) Ստորին շերտը կազմում է **խոշորահատիկ ասֆալտաբետոնե շերտը**, վերին շերտը՝ **մանրահատիկ ասֆալտաբետոնե շերտը**: Ստորին և վերին շերտերի միասնական հաստությունը կազմում է երթևեկելի մասի ընդհանուր շերտի հաստության 18-25%-ը (Աղյուսակ 3): Եթե վերին շերտը ստորին շերտի վրա տեղադրվում է երկու օրվա ընթացքում, ապա ստորին շերտի վրա մշակում չի պահանջվում: Իսկ եթե ստորին շերտի տեղադրումից հետո անցնում է երկու օրից ավելի, ապա ստորին շերտը մաքրվում է փոշուց, ապա կատարվում է բիտումային էմուլսիայով մշակում. 1մ² մակերեսի համար պահանջվում է 270 գրամ:

Աղյուսակ 3. Միաշերտ և երկշերտ ասֆալտաբետոնե շերտերի հաստությունները, այն դեպքում, երբ երթևեկելի մասի ընդհանուր հաստությունը սահմանված է 45 սմ

Միաշերտ ասֆալտաբետոնե շերտ		Երկշերտ ասֆալտաբետոնե շերտ	
1. Ավազակոպճային ենթաշերտ	17 սմ	1. Ավազակոպճային ենթաշերտ	15 սմ
2. Խճային նախաշերտ 40-70մմ	12 սմ	2. Խճային նախաշերտ 40-70մմ	12 սմ
3. Խճային հիմք բիտումի տարածումով	10 սմ բ-1մ ² - 4.12 կգ	3. Խճային հիմք բիտումի տարածումով	8 սմ բ- 1մ ² - 4,12 կգ
4. Մանրահատիկ ասֆալտաբետոն	6 սմ	4.1 Խոշորահատիկ ասֆալտաբետոն	6 սմ
		4.2 Մանրահատիկ ասֆալտաբետոն	4 սմ

Երթևեկելի մասի շերտերի նվազագույն հաստությունները ներկայացված են Աղյուսակ 4-ում, որով ավազակոպչային շերտի և խճային նախաշերտի նվազագույն հաստությունները սահմանված են 10 սմ, բիտումի տարածումով խճային հիմքի և խոշորահատիկ ասֆալտաբետոնե շերտերի նվազագույն հաստությունները՝ 6 սմ, իսկ մանրահատիկ ասֆալտաբետոնե շերտի նվազագույն հաստությունը՝ 3 սմ:

Աղյուսակ 4. Երթևեկելի մասի շերտերի նվազագույն հաստությունները

Շերտեր	Նվազագույն հաստություն
1. Ավազակոպչիճ	- h min= 10 սմ
2. Խճային նախաշերտ	- h min=10 սմ
3. Խճային հիմք բիտումի տարածումով	- h min= 6 սմ
4. Խոշորահատիկ ասֆալտաբետոն	- h min= 6 սմ
5. Մանրահատիկ ասֆալտաբետոն	- h min= 3 սմ

Ասֆալտաբետոնե շերտի հաստությունը ապահովելու համար՝

1. Ասֆալտահարթիչ մեխանիզմով փռելիս հաստությունը պահվում է պահանջվող հաստությունից 20%-ով ավելի

2. Ձեռքով տեղադրելիս՝ պահանջվող հաստությունից 50%-ով ավելի:

Ավտոճանապարհի որակի համար անհրաժեշտ է կատարել բոլոր կոնստրուկտիվ և տեխնոլոգիական պահանջները (հորիզոնական և ուղղաձիգ, ջրահեռացման ապահովում, նյութերի և հավելանյութերի ճիշտ համասեռություն և այլն): Ըստ նորմատիվային պահանջների ասֆալտի ջերմաստիճանը, նախքան շինհրապարակում տեղադրելը, պետք է լինի **նվազագույնը 130°C, առավելագույն ջերմաստիճանը՝ 160°C:**


Կողնակներն ամրացվում են ավազակոպչով, որի հաստությունը սահմանվում են 5-12 սմ, իսկ լայնությունը՝ 0,9-2,4 մետր: **Մայթերի** լայնությունը սահմանվում է 1-2,4 մետր: Մայթերի իրականացման համար հեռացվում են քայքայված ասֆալտի շերտը և ստորին շերտերը: Հեռացվում են ստորին բերրի հողի (սև հողի) շերտերը: Դրանից հետո կատարվում է խճային շերտի իրականացումը՝ 10-15 սմ հաստությամբ, ապա ասֆալտաբետոնե շերտը (ավազային ասֆալտաբետոն)՝ 3-4 սմ հաստությամբ: Մայթի հիմքը պատրաստվում է ավազակոպչով կամ 10-40 մմ ֆունկցիայի խիճով, որի հաստությունը սահմանվում է 6-12 սմ: Մայթի վերին շերտը պատրաստվում է ավազային ասֆալտաբետոնից, որի հաստությունը սահմանված է 2-4 սմ:

1 - Բազալտե եզրաքարի տակ տեղադրվում է բետոնե հիմք, որի հաստությունը 10 սմ է, լայնությունը՝ 30 սմ (Նկար 1): Բետոնե հիմքը կառուցվում է եզրաքարերը տեղադրելուց առնվազն մեկ օր առաջ:

2 - Բազալտե եզրաքարի հետևի մասում, եզրաքարի ամրացման համար, տեղադրվում է բետոն (Նկար 1), որի հաստությունը 10 սմ է, բարձրությունը՝ 15 սմ. աշխատանքը կատարվում է եզրաքարերը շարելուց հետո:

Նկար 1. Բազալտե եզրաքարեր

Նկար 2. Եզրաքարերի տեղադրումը երթևեկելի մասի նկատմամբ



Եզրաքարի տակ իրականացվող բետոնը պետք է սև հողից առանձնանա առնվազն 5 սմ հաստությամբ խճային շերտով (Նկար 1): Եզրաքարը երթևեկելի մասի ասֆալտաբետոնից վերև պետք է երևա 13-17 սմ, իսկ մնացած մասը մնում է երթևեկելի մասի շերտերի տակ (Նկար 2):

1.2 Իրավական կարգավորումներ

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎՋԵԲ) միջև 2016թ. մայիսի 11-ին ստորագրվել է «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագիր (այսուհետ՝ Վարկային Համաձայնագիր²), որի հիմքով իրականացվում է «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիրը, ծածկագիր թիվ 46540 (այսուհետ՝ Ծրագիր): Վարկային Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է միջազգային պարտավորություններ, որոնց համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ուսումնասիրվել է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից և այն ճանաչվել է համապատասխան ՀՀ Սահմանադրությանը³:

ՀՀ-ում շինարարությունը և այդ ոլորտում ընթացող գործընթացները՝ ճանապարհաշինություն, փողոցաշինություն, պետք է համապատասխանեն ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գնումների գործընթացի կիրառման ապահովող ենթաօրենսդրական ակտի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և դրա կիրարկումն ապահովող՝ ՀՀ կառավարության 02.07.2009թ. N774-Ն, 02.07.2009թ. N775-Ն, 02.07.2009թ. N777-Ն, 07.04.2011թ. N510-Ն և 19.03.2015թ. N596-Ն որոշումների, շինարարական նորմերը կարգավորող իրավական ակտերի և միջազգային պայմանագրերով նախատեսված իրավական կարգավորումներին:

Բացի վերոթվարկյալ իրավական փաստաթղթերից, սույն ուսումնասիրության իրականացման համար կարևորագույն փաստաթուղթ են հանդիսանում՝

- «Ծրագրի Համաձայնագիրը»⁴, որը կնքվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Գյումրու քաղաքապետարանի (այսուհետ՝ Ծրագրի Սուբյեկտ) միջև, որով Ծրագրի Սուբյեկտը ստանձնել է որոշակի պարտավորություններ ՎՋԵԲ նկատմամբ՝ Ծրագրի իրականացման կապակցությամբ,
- «Ծրագրի Իրականացման Համաձայնագիրը»⁵, որը կնքվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Վարկառու) և Ծրագրի Սուբյեկտի միջև:

Ստորև ներկայացվում են այն ոլորտները, որոնց պահանջների պահպանումն անհրաժեշտ է Ծրագրով իրականացվող՝ Գյումրի քաղաքում ճանապարհների բարեկարգման գործընթացի օրինականության ապահովման համար:

Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների գործընթաց. պայմանագրային պարտավորություններ: Հայաստանի Հանրապետությունում գնումների գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, որն ընդունվել է 2016թ. դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ է մտել 2017թ. ապրիլի 25-ին: «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառելիությունը ապահովում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման կարգով (այսուհետ՝ Կարգ), որն իր մեջ ներառում է գնումների պլանավորման, գնման գործընթացի

² Վարկային Համաձայնագիր, կնքված 11.05.2016թ.

³ ՀՀ սահմանադրական դատարանի 03.06.2016թ. ՍԴՈ-1276 որոշում

⁴ Ծրագրի Համաձայնագիր, 11.05.2016թ.

⁵ Ծրագրի Իրականացման Համաձայնագիր, 30.12.2016թ.

կազմակերպման (ներառյալ՝ գնման առարկայի բնութագրերի հաստատումը), պայմանագրի կնքման և պայմանագրի կատարման ու կառավարման գործառնություններ:

Շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա:

Ցանկացած անձ իրավունք ունի մասնակցել գնման ընթացակարգին, եթե նա.

- ✓ Դատական կարգով ճանաչված չէ սնանկ
- ✓ Չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով
- ✓ Նրա գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է
- ✓ Ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնումների նախընտրելի ընթացակարգը **բաց մրցույթն է, որը և ընտրվել է Ծրագրի Սուբյեկտի կողմից:**

Շինարարական աշխատանքների գնման դեպքում կարևոր է մասնակիցների որակավորման չափանիշների գնահատումը՝ տեխնիկական միջոցները և աշխատանքային ռեսուրսները: Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշները: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Նշենք, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես աշխատանքային ռեսուրսներ որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է պայմանագրի կատարման համար իր կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները (անունը, ազգանունը, որակավորումը, աշխատանքային փորձը):

Գնման գործընթացի պատասխանատուներն են.

1. Պատվիրատուի ղեկավարը (ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններում՝ տվյալ մարմնի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձը)
2. Գնումները համակարգողը
3. Գնահատող հանձնաժողովը
4. Պատասխանատու ստորաբաժանումը:

Գնման գործընթացի բաց ընթացակարգի պլանավորման, կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ քայլերը⁶.

1. Պատվիրատուի ղեկավարը հաստատում է գնումների պլանը:
2. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրերի ընթացքում պատվիրատուի ղեկավարն արձակում է հրաման պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող/ներ սահմանելու մասին:

⁶ Գնումների մասին» ՀՀ օրենք, ուժի մեջ է մտել 25.04.2017թ.

3. Եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը:
4. Գնման հայտերը հաստատվում են պատասխանատու ստորաբաժանման առաջին նիստով, որն արձանագրվում է:
5. Պատվիրատուի ղեկավարն արձակում է հրաման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ստեղծելու և գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակելու մասին:
6. Կազմված գնման հայտին կցվում է պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատված ներքին փաստաթղթաշրջանառության փաստաթուղթ :
7. Կազմված և հաստատված գնման հայտը պատասխանատու ստորաբաժանումը փոխանցում է գնումներ համակարգողին: Անհամապատասխանություն չարձանագրելու դեպքում գնումներ համակարգողը կազմում է հայտարարության և հրավերի տեքստերը:
8. Գնումները համակարգողը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստ: Գնահատող հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո գնումները համակարգողը հայտարարության և հրավերի տեքստը հրապարակման համար ներկայացնում է հրապարակող մարմին:
9. Հրապարակման պահից մինչև գնահատող հանձնաժողովի երկրորդ՝ հայտերի բացման նիստի օրը գնումները համակարգողն ընդունում է հայտերը և գրանցում գրանցամատյանում:
10. Գնումները համակարգողը գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի օրը կազմում է գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման համար անհրաժեշտ գնահատման թերթիկները:
11. Գնումները համակարգողը գրանցամատյանը փակում է սահմանված կարգով, մասնակիցների հայտերը և գնահատման թերթիկները համակարգում ըստ հերթականության և հայտարարում գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի սկիզբը:
12. Գնումները համակարգողը գրանցամատյանը, մասնակիցների հայտերը և գնահատման թերթիկները փոխանցում է գնահատող հանձնաժողովի նախագահին:
13. Գնահատող հանձնաժողովի անդամները լրացնում են գնահատման թերթիկները՝ ըստ հայտերի բացման հերթականության:
14. Գնահատող հանձնաժողովի անդամները գնումներ համակարգողին վերադարձնում են գնահատման թերթիկները:
15. Գնումները համակարգողը կազմում է հայտերի բացման նիստի արձանագրություն:
16. Գնումները համակարգողը կազմում է և ուղարկում է ծանուցում/ծանուցումներ հայտերի բացման նիստի առաջին տեղը զբաղեցրած մասնակցին/մասնակիցներին:
17. Հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:
18. Գնումներ համակարգողն ընդունում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի/մասնակիցների հայտերը և գրանցում գրանցամատյանում ըստ ստացման հերթականության:
19. Գնումները համակարգողը հայտարարում է հայտերի գնահատման նիստի սկիզբը:
20. Գնումներ համակարգողը գրանցամատյանը փոխանցում է գնահատող հանձնաժողովի նախագահին:
21. Գնահատող հանձնաժողովի անդամները լրացնում են գնահատման թերթիկները:

22. Հայտերի գնահատման նիստում հայտարարվում են ընտրված (հաղթող) կազմակերպության/կազմակերպությունների անունները և անգործության ժամկետի սկիզբը: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

23. Գնումներ համակարգողը հրապարակող մարմին է ուղարկում պայմանագիր/պայմանագրեր կնքելու մասին որոշումը:

24. Գնումներ համակարգողը ընտրված (հաղթող) մասնակցին ուղարկում է ծանուցում:

25. Անգործության ժամկետը լրանալուց հետո ընտրված (հաղթող) մասնակցի/մասնակիցների հետ կնքվում է պայմանագիր/պայմանագրեր:

26. Գնումներ համակարգողը պայմանագիր կնքելուց, իսկ չկնքելու դեպքում՝ անգործության ժամկետը լրանալուց հետո, հրավիրում է գնահատող հանձնաժողովի ընթացակարգի ամփոփման նիստ:

27. Գնումներ համակարգողը կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն և պայմանագրի կնքման մասին հայտարարություն, որն ուղարկում է հրապարակող մարմին հրապարակման:

28. Գնումներ համակարգողն արխիվացնում է գնման ընթացակարգի փաստաթղթերը:

29. Գնումներ համակարգողը փոխանցում է կնքված պայմանագրի օրինակը պատասխանատու ստորաբաժանմանը:

30. Պատասխանատու ստորաբաժանումը ստանձնում է հետպայմանագրային ժամանակահատվածի պատասխանատվությունը (պայմանագրի կառավարման), կազմում պայմանագրի ընդունման ակտը և հաստատում հանձնման-ընդունման արձանագրությունը:

Հանձնաժողովը համարվում է լուծարված գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը:

Կարևոր է իմանալ, որ գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, ուստի՝ պատվիրատուի և մասնակցի միջև պայմանագրային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ⁷ և նրանց միջև կնքված պայմանագրով:

Պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա պայմանագրի կողմը պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում և նախագծած ու փորձաքննություն իրականացրած անձինք պատվիրատուին վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման և (կամ) դրա հետևանքով առաջացած կորստի չափով:

Օրագրի Սուբյեկտը գնումների գործընթացը կազմակերպում է, ոչ միայն առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և կարգով, այլ նաև պարտավորվում է պահպանել Օրագրի Համաձայնագրի 2.04 բաժնում նախատեսված պայմանները:

⁷ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 738-755

1.3 Կառուցապատման ընթացակարգ

Կառուցապատման ընթացակարգի առանձին փուլերը կանոնակարգող իրավական մեկ ընդհանրական փաստաթուղթ է «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշումը⁸:

Կառուցապատման գործընթացն իրականացվում է հետևյալ փուլերով.

1. Նախագծման թույլտվություն (կամ ճարտարապետահաստակագծային առաջադրանք)
2. Շինարարական թույլտվություն
3. Ավարտական ակտ (կամ շահագործման թույլտվություն)
4. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակում
5. Նախագծի փորձաքննություն

Նախագծային աշխատանքների ավարտից հետո կառուցապատողը կամ նախագծային աշխատանքների պատասխանատու կապալառուն նախագիծը ներկայացնում է համապատասխան լիցենզիա ունեցող անձին՝ փորձաքննության (ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման N2 հավելված):

6. Շինարարության (քանդման) թույլտվություն և Նախագծի համաձայնեցում

7. Հասարակայնության իրազեկում

Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրազեկում է հասարակայնությանը ՀՀ համայնքներում և վարչական տարածքներում կենսագործունեության միջավայրի ծրագրավորվող փոփոխությունների մասին, որն իրականացվում է՝

- զանգվածային լրատվության (այդ թվում՝ էլեկտրոնային) միջոցներով (տեղական և հանրապետական ռադիո, հեռուստատեսություն, տպագիր պարբերականներ).
- ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով, հրապարակումներով, տեղական ինքնակառավարման մարմինների ինտերնետային կայքերում տեղադրմամբ.
- հասարակական քննարկումներով:

8. Շինարարություն (Շինարարական աշխատանքների իրականացում)

9. Շինարարության օբյեկտի տեխնիկական հսկողություն

Քաղաքաշինական օբյեկտի շինարարության որակի նկատմամբ տեխնիկական հսկողությունը և ինժեներական հետազննումն իրականացվում են ամբողջ շինարարության ընթացքում, կառուցապատողի և համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող մասնագիտական կազմակերպության հետ կնքվող պայմանագրի հիման վրա:

10. Ավարտական ակտի ձևակերպում

Օբյեկտի շինարարական աշխատանքների իրականացման ավարտը և շահագործման ընդունումը փաստագրվում են ավարտական ակտով (շահագործման թույլտվությամբ) (ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման N5 հավելվածի N3-1 ձև)՝ շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացվելուց և պատասխանատու շինարարական

⁸ ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշում

կազմակերպության կողմից այն կառուցապատողին հանձնելուց ու կառուցապատողի կողմից ընդունվելուց հետո:

Ավարտված օբյեկտի համապատասխանությունը նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին հավաստվում է **ընդունող հանձնաժողովի ակտով** (ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման N5 հավելվածի N3-2-1 ձև) և հիմնավորվում **Կատարողական փաստաթղթերով** կամ օբյեկտի տեխնիկական վիճակի մասին դրական եզրակացություններով:

Կատարողական փաստաթղթերի կազմը և ձևերը սահմանվում են քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի գերատեսչական ակտով: Կատարողական փաստաթղթերի փաթեթը կազմում է կապալառուն՝ տեխնիկական հսկողություն կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

1.4 Աշխատանքի պաշտպանություն և շրջակա միջավայրի պահպանության կանոններ

Շինարարական արտադրության կազմակերպումն ապահովում է անվտանգության տեխնիկայի կանոնների⁹ պահպանումը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության պահանջների ապահովումը: Մինչև շինարարության սկիզբն անհրաժեշտ է հասարակությանն իրազեկելու նպատակով շինարարության համար հատկացված շինհրապարակի ցանկապատի /այդ թվում՝ ճանապարհաշինական աշխատանքների ուղեգծի/ կամ մեկ այլ առավել տեսանելի տեղամասում տեղադրել պատվիրատու և կապալառու կազմակերպությունների տվյալները /անվանում, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար/, ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետների, իսկ ՀՀ պետական բյուջեի (այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների կամ դրանց ներգրավմամբ և համայնքային բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների դեպքում նաև շինարարության նախահաշվային արժեքի մասին տեղեկատվություն պարունակող վահանակներ՝ մինչև ավարտված շինարարության փաստագրումը դրանք պահպանելու պայմանով:

Կապալառուն շինարարության և դրա հետ կապված աշխատանքներ իրականացնելիս պարտավոր է կատարել շրջակա միջավայրի պահպանության և շինարարական աշխատանքների անվտանգության վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրության և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները:

Շրջակա միջավայրի պահպանություն: Շինարարական արտադրության կազմակերպման ժամանակ համայնքի առողջության և անվտանգության ազդեցության ենթարկվելու վտանգը կարող է պայմանավորված լինել աղմուկի ազդեցությամբ, հողի տեղափոխմամբ պայմանավորված փոշու և այլ արտանետումներով, պայթեցման աշխատանքների իրականացմամբ, լիցքի աշխատանքներով, ինչպես նաև մեքենաների և սարքավորումների շահագործմամբ: Ուստի, շինարարական արտադրության կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է.

- Իրականացնել շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ և աշխատանքներ, որոնք պետք է ընդգրկեն շինարարության ընթացքում խախտված հողերի վերակուլտիվացում (ռեկուլտիվացում), բնական ռեսուրսների կորստի կանխում, հողեր, ջրավազաններ ու մթնոլորտ վնասակար արտանետումների կանխում կամ մաքրում: Նշված միջոցառումները և աշխատանքները պետք է նախատեսված լինեն նախագծային փաստաթղթերում:
- Համահարթեցման աշխատանքների իրականացման ժամանակ հետագա օգտագործմանը պիտանի հողային շերտը պետք է նախօրոք հանվի և պահեստավորվի հատուկ առանձնացված տեղամասերում:
- Շինարարության իրականացման տարածքներում շինմոնտաժային աշխատանքների կատարման ժամանակ պետք է պահպանվեն օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները:
- Շինարարական հրապարակում գոյացած արտադրական ու կենցաղային հոսքը (աղբը) պետք է մաքրվի և վնասազերծվի շինարարության կազմակերպման և աշխատանքների իրականացման նախագծերում նախատեսված լուծումներին համապատասխան:

Աշխատանքի պաշտպանություն: Աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է ստեղծվեն օրենքով սահմանված պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ: Աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն¹⁰:

⁹ ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008թ. թիվ 11-Ն հրաման

¹⁰ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 242-262

Շինարարական աշխատանքների բնույթից և ծավալից ելնելով՝ Բանվորական բրիգադները ձևավորվում են որպես քազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը պետք է ապահովվի անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պետք է պահպանվեն շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվում հրահանգում:

Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

ԲԱԺԻՆ 2. ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՂՈՑԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 Փողոցաշինության ոլորտում Գյումրու համայնքային բյուջեից հատկացված ծախսերի վերլուծություն

Սույն վերլուծության նպատակն է բացահայտել 2015-2018թթ. Գյումրու համայնքային բյուջեից փողոցաշինության ոլորտում կատարված ծախսերի արդյունավետությունը:

Հետազոտության առջև դրվել են հետևյալ խնդիրները.

1. Պարզել 2015-2018թթ. համայնքային բյուջեից ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեում
2. Պարզել 2015-2018թթ. համայնքային բյուջեից ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերի դինամիկան
3. Հաշվարկել 2015-2018թթ. համայնքային բյուջեից ճանապարհաշինության ոլորտին հատկացված ֆինանսական միջոցներով կատարված աշխատանքները և 1մ² տարածքի ընթացիկ նորոգման ու հիմնանորոգման համար հատկացված ֆինանսական միջոցները
4. Հաշվարկել 2015-2018թթ. համար 1մ² տարածքի համար տարբեր կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների արդյունավետությունը՝ ըստ հիմնանորոգված փողոցների կյանքի տևողության
5. Ներկայացնել ուսումնասիրվող ժամանակահատվածում հիմնանորոգված և փոսայցված փողոցների քանակը և մակերեսը
6. Պարզել շինարարական կազմակերպությունների՝ պայմանագրերով սահմանված պարտականությունները շինաշխատանքների որակի մասով, և դրանց չիրականացման դեպքում պատվիրատուի (Գյումրու համայնքապետարանի) կողմից կիրառվող պատասխանատվությունը, այդ թվում՝ ֆինանսական
7. Պարզել, թե ինչ մեթոդաբանությամբ է իրականացվում փողոցաշինության որակի վերահսկումը և ինչ ծախսեր են իրականացվում այդ ուղղությամբ
8. Պարզել, թե փողոցների նորոգումից հետո սպասարկման ի՞նչ պայմաններ են սահմանվում և կան արդյոք երաշխիքային սպասարկման ժամկետներ թե ոչ:

Ուսումնասիրությունն իրականացվել է 2018թ. սեպտեմբեր - 2019թ. հունվար ամիսներին: Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել Գյումրու համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրված բյուջեների տարեկան հաշվետվությունները¹¹, հարցումներին ի պատասխան համայնքապետարանից ստացված տեղեկատվությունը, «armeps.am» կայքում տեղադրված գնումների պայմանագրերը¹²: Քանի որ 2018թ. բյուջեի կատարողականն ուսումնասիրվող ժամանակահատվածում դեռևս հաստատված չէր, ուսումնասիրության համար որպես 2018թ. տարեկան ցուցանիշ վերցվել են պլանային՝ իննամսյա ճշգրտված ցուցանիշները:

Ճանապարհաշինությունը, հանդիսանալով համայնքային հիմնական լիազորություններից մեկը, Գյումրիում վերջին տարիներին մեծ կարևորություն է ձեռք բերել, ավելին՝ բացի ՏԻՄ բյուջեով սահմանված


¹¹ <http://www.gyumricity.am/hy/gyumri-community/community-budget>

¹² <https://armeps.am/epps>

աշխատանքներից, 2018թ.-ից իրականացվում են միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ոլորտային ծրագրեր: Համայնքային բյուջեի կառուցվածքում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը 2015-2018թթ. համապատասխանաբար կազմել են 14,2%, 13,6%, 10,6%, 10,3%: Ինչպես տեսնում ենք, ճանապարհաշինության ոլորտին համայնքային բյուջեից հատկացված միջոցները նվազել են մոտ 4 տոկոսով:

Դիտարկենք 2015-2018թթ. ոլորտում կատարված ծախսերի դինամիկան՝ բացարձակ ցուցանիշով (տե՛ս Գձ.1):

Գծապատկեր 1. Գյումրի համայնքի բյուջեից ճանապարհաշինության ոլորտին հատկացված ֆինանսական միջոցների դինամիկան 2015-2018թթ./մլն դրամ




Գծապատկերից երևում է, որ յուրաքանչյուր հաջորդ տարին համայնքային բյուջեից ավելի քիչ ֆինանսական միջոցներ են հատկացվել ճանապարհաշինության համար: Հատկանշական է, որ 2018թ. պլանավորված ցուցանիշը 2017թ. նկատմամբ 4,8%-ով ավելի է: Ավելին, 2018թ. պլանավորված ցուցանիշը 15%-ով գերազանցում է 2017թ. կատարողականը, սակայն 2018թ. 9 ամիսների կատարողականը մոտ 2 անգամ փոքր է 2017թ. տարեկան կատարողական ցուցանիշից, ինչը խոսում է ՏԻՄ բյուջեի անկատար պլանավորման մասին: Ինչպես տեսնում ենք, յուրաքանչյուր տարվա համար կատարողականները շեղվում են պլանային ցուցանիշներից. ըստ տարիների դրանք համապատասխանաբար կազմում են 3%, 11%, 8,8%, 58,5% (2018թ. իննամյա կատարողականը հաշվարկված է տարեկան պլանայինի նկատմամբ): Եթե հաշվի առնենք, որ Գյումրիում տարվա վերջին եռամսյակում եղանակային պայմաններից ելնելով՝ հնարավոր չէ իրականացնել բուն ճանապարհաշինական աշխատանքներ, ապա կարող ենք փաստել, որ 2018թ. ևս պլանային և կատարողական ցուցանիշների միջև առկա է լինելու էական տարբերություն: Սա ևս խոսում է համայնքային բյուջեի պլանավորման մեջ թերացման մասին: Այն կարող է պայմանավորված լինել պլանավորման մեթոդի ընտրությամբ կամ ոլորտային խնդիրներին և դրանց կարևորության աստիճաններին ոչ բավարար իրազեկ լինելու հանգամանքով:

Համայնքային բյուջեից ճանապարհաշինության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների տարեցտարի նվազումը կարելի է պայմանավորել նաև ՎԶԵԲ-ի կողմից տրամադրված վարկային միջոցներով Գյումրիում իրականացվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրով, որը մեկնարկել է

2018թվականին: Նշենք, որ Գյումրիում սկսած 2018թ. ճանապարհաշինական ծրագրեր իրականացվում են նաև Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ:

Ըստ «ՏԻՄ մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի, համայնքային բյուջեն կազմված է երկու՝ ֆոնդային և վարչական մասերից, որոնք համապատասխանաբար ներկայացնում են բյուջեի կապիտալ և ընթացիկ ծրագրերի իրականացումը: Հասկանալու համար, թե համայնքային բյուջեից իրականացվող կոնկրետ ինչ աշխատանքներ են կրճատվել, ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները դիտարկենք նաև ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի.

Գծապատկեր 2. Գյումրու համայնքային բյուջեից ճանապարհաշինության ոլորտին հատկացվող միջոցներն ըստ բյուջեի ֆոնդային և վարչական մասերի /մլն դրամ/



Ինչպես երևում է Գծապատկեր 2-ից, մինչ 2018թ. կտրուկ նվազել են ֆոնդային բյուջեից հատկացվող միջոցները՝ 2016թ.՝ 7,7%-ով, 2017թ.՝ 41,8%-ով, իսկ 2018թ. պլանավորված է 49,6%-ով ավելի՝ նախորդ տարվա համեմատ: Վարչական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների կրճատումը ավելի փոքր է՝ 2016թ.՝ 18,8%, 2017թ.՝ 5,2%, 2018թ.՝ 3,9%: Այս ցուցանիշներն առավել պարզ հասկանալու համար դիտարկենք յուրաքանչյուր ուղղությամբ կատարված աշխատանքները: Հաշվի առնելով վերը նշված երկու խոշոր ճանապարհաշինարարական ծրագրերը՝ անհասկանալի է ՏԻՄ կողմից ֆոնդային բյուջեի 41,8% աճի պլանավորումը, հատկապես, որ, ինչպես արդեն նշեցինք, այն կատարվել է գրեթե կիսով չափ:

Ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի N5 հրամանի¹³, ծախսերը դասակարգվում են գործառնական և տնտեսագիտական բովանդակությամբ: Տնտեսագիտական դասակարգումը ցույց է տալիս, թե ինչ հումք նյութեր են ձեռքբերվել, իսկ գործառնական դասակարգումը՝ ինչ աշխատանքներ են իրականացվել: Կա նաև ծախսերի դասակարգման երրորդ տարբերակը՝ գործառնական՝ ներառյալ տնտեսագիտական հոդվածները, որը ցույց է տալիս, թե ոլորտային ծրագրերն իրականացնելու համար կոնկրետ ինչ աշխատանքներ և հումք նյութեր են ձեռքբերվել: Ոլորտին հատկացված ֆինանսական միջոցները դիտարկենք նաև ըստ ձեռքբերված ապրանքների.

¹³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=31156>

Աղյուսակ 5. Համայնքային բյուջեից ճանապարհաշինության ոլորտին հատկացված ֆինանսական միջոցներն ըստ տնտեսագիտական դասակարգման և գործառնական նշանակության /մլն դրամ/

	2015		2016		2017		2018	
	պլան	կատ	պլան	կատ	պլան	կատ	պլան	կատ
Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում/փոփոխումների հիմնանորոգում կամ կառուցում	227,3	216,6	242,8	199,9	141	116	174	104
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում/ընթացիկ փոփոխումներ	249,7	244,6	178,3	177,3	191,7	186	174	37,8
Հատուկ նպատակային այլ նյութեր/ճանապարհների սպասարկման համար ծառայությունների ձեռքբերում /օրինակ՝ գծանշման ներկեր/	28,9	28,9	51	41,8	25	24	24	11,8
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ճանապարհների սպասարկման ծառ. /օրինակ՝ գծանշում/	5,6	5,6	7,3	6,9	5	4,5	7,8	3,9

Աղյուսակ 5-ից երևում է, որ հիմնական նվազումը պայմանավորված է հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներով: Նվազումը նկատվում է նաև ճանապարհների սպասարկման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերմամբ, իսկ աշխատանքների ձեռքբերման մասով նկատվում է ն՝ աճ, ն՝ նվազում:

2.2 Հիմնանորոգված և ընթացիկ փոփոխումներ իրականացված փողոցների ուսումնասիրություն՝ ըստ իրականացված ծախսերի և կազմակերպությունների

Ծախսերի արդյունավետությունը հասկանալու նպատակով դիտարկվել է յուրաքանչյուր տարի ընթացիկ և կապիտալ նորոգման ենթարկված փողոցների ցանկը, և այն համադրվել է հաջորդող տարիներին համընկնող փողոցների հետ:

Այսպես, **2015թ.** ընթացքում փոսային նորոգում իրականացվել է 69 փողոցում՝ ընդհանուր՝ 29444,04 քառ. մետր մակերեսով, համայնքային բյուջեից ծախսվել է 232 մլն ՀՀ դրամ: Մեկ քառ. մետր տարածքի ընթացիկ նորոգման համար միջինացված ծախսվել է 7890 դրամ: Նկատենք, որ Աղյուսակ 1-ում արտացոլված տվյալների և վերոնշյալ ցուցանիշների միջև առկա են տարբերություններ, ինչը նկատվում է նաև հաջորդող տարիների ցուցանիշների շարքում: Աղյուսակ 5-ում ներկայացված ցուցանիշները վերցվել են Գյումրու համայնքապետարանի ֆինանսական բաժնից, իսկ վերոնշյալ ցուցանիշները տրամադրվել են համայնքապետարանի բնակկոմունալ բաժնից՝ մեր հարցմանն ի պատասխան: «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում» հոդվածի տարբերությունների մասին գրավոր հարցմանը պատասխան չենք ստացել, սակայն բանավոր զրույցի ժամանակ բնակկոմունալ բաժնից նշել են, որ դա ճաբայցման և խճապատման աշխատանքների գինն է՝ 2015թ. 12,6 մլն ՀՀ դրամ: 2015թ. կառուցված կամ հիմնանորոգված փողոցների թիվը 9 է՝ ընդհանուր՝ 18265 քառ. մետր տարածքով: Համայնքային բյուջեից ծախսվել է 213,8 մլն դրամ. մեկ քառ մետրի համար միջինացված ծախսվել է 11700 ՀՀ դրամ: Նշենք, որ հիմնանորոգումներն իրականացվել են 7 կազմակերպությունների կողմից: Երեք հիմնանորոգում իրականացվել է «Մերձմոսկովյան ԲԲԸ»-ի կողմից՝ 5711 քառ. մետր մակերեսով և 70,8 մլն ՀՀ դրամ բյուջեով:

Դիտարկենք, թե կապիտալ նորոգման համար, ըստ կազմակերպությունների, 1մ² տարածք հիմնանորոգելու համար ինչքան գումար է պահանջվել.

Աղյուսակ 6. 2015թ. համայնքային բյուջեից կապիտալ ճանապարհաշինության համար տարբեր կազմակերպությունների կողմից ծախսված գումարները 1 քառ. մետր տարածքի համար.

Կազմակերպություն	Հիմնանորոգված տարածք/քառ. մ.	Ծախսված գումար/ մլն դրամ	1 քառ. մ. հիմնանորոգման համար ծախսված գումար/դրամ
«Մերձնուկուլյան» ԲԲԸ	5711	70,8	12 410
«Դուստր Մոնիկա» ՍՊԸ	4770	68	14 310
«Վահրադյան Շին» ՍՊԸ	1300	18,7	14 410
«Բարեկարգ քաղաք» ՓԲԸ	2394	17	7 120
«Էլիտ Արման Շին» ՍՊԸ	2270	18,9	8 310
«Գանձա Շին» ՍՊԸ	1000	10	10 000
«Ախուրյանի Կոոպչին» ՍՊԸ	820	9,9	12 190
<i>Միջինացված</i>			<i>11 250</i>

Ինչպես տեսնում ենք, տարբեր կազմակերպությունների կողմից տարբեր գներ են սահմանվել: Ցավոք, «gnumner.am» և «armeps.am» կայքերում հնարավոր չեղավ գտնել 2015-2017թթ. գնումների համար կնքված պայմանագրերը, ինչի պատճառով էլ չենք կարող հիմնավորել գների էական տարբերությունները: Մի քանի անգամ ուղարկված մեր հարցումների պատասխանները ձգձգվել և ծրագրային ժամկետներում չեն տրամադրվել:

2016թ. ընթացիկ նորոգման են ենթարկվել 70 փողոցներ, 2 փողոցների մայթեր և 2 հարթակներ՝ ընդհանուր 27931,41 քառ. մ. մակերեսով: Համաձայն քաղաքապետարանի բնակկոմունալ բաժնից ստացված տեղեկատվության, այս ամենի համար վարչական բյուջեից ծախսվել է 205 մլն ՀՀ դրամ: Ստացվում է՝ մեկ քառ. մետր տարածքի ընթացիկ նորոգման համար միջինացված ծախսվել է 7345 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ 545 դրամով կամ 6,9%-ով ավելի մատչելի:

Նշենք, որ 2016թ. վարչական բյուջեի «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում» հոդվածում արտացոլված ծախսը (տե՛ս Գծապատկեր 1) փոքր է բնակկոմունալ բաժնից ստացված տվյալներում արտացոլված ծախսից. տարբերությունը 27,7 մլն ՀՀ դրամ է: Ըստ մյուս հարցերին ստացված բանավոր պատասխանների տրամաբանության, սա կարող է ձևավորված լինել որպես պարտք, որը մարվելու է հաջորդ տարիներին: Այս մասին ևս գրավոր պատասխան չի ստացվել:

Կապիտալ նորոգված կամ կառուցված փողոցների թիվը եղել է 12՝ 27655 քառ. մետր մակերեսով, ծախսերը կազմել են 250,6 մլն դրամ: Հիմնանորոգումներն իրականացվել են 7 տարբեր կազմակերպությունների կողմից:

Աղյուսակ 7. 2016թ. համայնքային բյուջեից կապիտալ ճանապարհաշինության համար տարբեր կազմակերպությունների կողմից ծախսված գումարները 1 քառ. մետր տարածքի համար

Կազմակերպություն	Հիմնանորոգված տարածք/քառ. մ.	Ծախսված գումար/ մլն դրամ	1 քառ. մ. հիմնանորոգման համար ծախսված գումար/դրամ
«Մերձնուկուլյան» ԲԲԸ	2272	16,8	7 400
«Գանձաշին» ՍՊԸ	3012	27,6	9 170
«Վահրադյան Շին» ՍՊԸ	10962	102,8	9 380
«Դուստր Մոնիկա» ՍՊԸ	664	11,9	18 048
«Էլիտ Արման Շին» ՍՊԸ	3900	32	8 326
«Վանիկ Գրիգորյան» Ա/Ձ	3325	24,89	7 485
«Ախուրյանի Կոոպչին» ՍՊԸ	1860	16	8 710
<i>Միջինացված</i>			<i>9 788</i>

2016թ. 1 քառ. մետր տարածքի կապիտալ շինարարությունը միջինում 13% ավելի մատչելի է եղել, քան 2015թ.:

Աղյուսակ 7-ում գնային ցուցանիշով առանձնանում է «Դուստր Մոնիկա» ՍՊԸ կողմից կատարված աշխատանքը: Նշենք, որ գնումն իրականացվել է Սրբ. Ամենափրկիչ եկեղեցու տարածքի հյուսիսային մասի հարթակի նորոգման նպատակով. տարածքը գտնվում է քաղաքի կենտրոնական հատվածում և համարվում է զբոսաշրջային վայր:

Նկատենք, որ բնակկոմունալ բաժնից ստացված տվյալների համաձայն, կապիտալ նորոգման համար ծախսվել է 250,6 մլն ՀՀ դրամ, իսկ բյուջեում արտացոլված է 199,9 մլն ՀՀ դրամ (տե՛ս Գժ. 1). տարբերությունը կազմում է 50,7 մլն ՀՀ դրամ: Մեր գրավոր հարցմանը պատասխան չենք ստացել, սակայն ֆինանսական բաժնի աշխատակցի հետ բանավոր զրույցի ժամանակ նշվել է, որ սա ձևակերպվել է որպես պարտք է, որը նույն հոդվածով մարվել է հաջորդ տարի:

2017թ. ընթացիկ նորոգման են ենթարկվել 78 փողոց և երկու մայթ՝ 20546,59 քառ. մետր ընդհանուր մակերեսով, ծախսվել է 134,59 մլն ՀՀ դրամ: Ստացվում է, որ մեկ քառ. մետր տարածքի ընթացիկ նորոգման համար միջինացված ծախսվել է 6550 դրամ՝ 795 դրամով կամ 10,8%-ով ավելի մատչելի, քան նախորդ տարի:

2017թ. «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում» հոդվածում արտացոլված ծախսը (տե՛ս Գժապատկեր 1) 186 մլն ՀՀ դրամ է՝ 51 մլն ՀՀ դրամով ավելի բնակկոմունալ բաժնի կողմից ներկայացված ծախսերից: Փաստենք, որ իրենց տված տվյալներով չի հասկացվում՝ որն է նախորդ տարվա պարտքի մարումը, որը ճաքալցման ծախսը:

2017թ. հիմնանորոգվել է մեկ փողոց՝ 3290 քառ. մ. տարածքով. ծախսը կազմել է 36,7 մլն ՀՀ դրամ: Մեկ քառ. մետրի համար ծախսվել է 11162 ՀՀ դրամ, շինարարությունն իրականացրել է «Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ն: Նախորդ տարվա համեմատ կազմակերպությունը 34%-ով ավելի բարձր արժեք է սահմանել, ինչը քաղաքապետարանի համար նախորդ տարվա միջինացված գնից 14%-ով թանկ է արժեցել:

Նկատենք, որ 2017թ. կապիտալ շինարարության ծախսերը, ըստ բնակկոմունալ բաժնից ստացված տեղեկատվության, եղել են 36,7 մլն ՀՀ դրամ, իսկ բյուջեում արտացոլված է 116 մլն ՀՀ դրամ՝ 79,3 մլն ՀՀ դրամի տարբերությամբ, որից, ըստ ստացված տեղեկատվության և մեր հաշվարկների, 50,7 մլն ՀՀ դրամը եղել է նախորդ տարվա պարտքերի մարումը: Մնացյալ 28,6 մլն ՀՀ դրամի մասին տեղեկատվություն չունենք: Նախորդ տարվա պարտքը հաջորդ տարի տեղափոխելը 2017թ. բյուջեն ուռճացված է ցույց տալիս և չի արտացոլում այդ տարիներին համայնքում ստեղծվող իրական արժեքը:

2018թ. նախատեսվել է 83 փողոցների և հրապարակների ընթացիկ նորոգում: Նորոգումն իրականացվել է երեք կազմակերպությունների կողմից՝ «Էլիտ Արման Շին» ՍՊԸ (8400 քառ. մետր՝ 47 մլն ՀՀ դրամով), «Վահրադյան Շին» ՍՊԸ (1205,46 քառ. մետր՝ 8 մլն ՀՀ դրամով) և «Դուստր Մոնիկա» ՍՊԸ (1350 քառ. մետր՝ 5,9 մլն ՀՀ դրամով): Ընդհանուր ստացվում է 10 955,49 քառ. մետր տարածքի նորոգում՝ 61 մլն ՀՀ դրամով, իսկ 1 քառ. մետր տարածքի նորոգումը միջինացված կազմել է 5593 ՀՀ դրամ: 2018թ. կրկին նվազել է 1 քառ. մետրի ընթացիկ նորոգման ծախսը՝ այս անգամ 957 դրամով կամ 14,6 %-ով:

2018թ. «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում» հոդվածում արտացոլված ծախսը (տե՛ս Գժապատկեր 1) 37,8 մլն ՀՀ դրամ է՝ 9,59 մլն ՀՀ դրամով պակաս բնակկոմունալ բաժնից ստացված տվյալից:

2018թ. հիմնանորոգվող փողոցների թիվը 7-ն է՝ 18183 քառ. մետր տարածքով. ծախսը կազմել է 144 մլն ՀՀ դրամ:

Աղյուսակ 8. 2018թ. համայնքային բյուջեից կապիտալ ճանապարհաշինության համար տարբեր կազմակերպությունների կողմից ծախսված գումարները 1 քառ մետր տարածքի համար

Կազմակերպություն	Հիմնանորոգված տարածք/քառ. մ.	Ծախսված գումար/ մլն դրամ	1 քառ. մ. հիմնանորոգման համար ծախսված գումար/դրամ
«Շինպլուս» ԲԲԸ	1468	18,9	12 940
«Դուստր Մոնիկա» ՍՊԸ	1410	12	8 510
«Դուստր Մոնիկա» ՍՊԸ	2450	19,5	7 960
«Շինպլուս» ԲԲԸ	2070	15	7 480
«Շինպլուս» ԲԲԸ	4685	33,9	7 250
«Վահրադյան Շին» ՍՊԸ	1500	9,7	6 510
«Վահրադյան Շին» ՍՊԸ	4600	34,6	7 540
<i>Միջինացված</i>			<i>8 310</i>

2018թ. կապիտալ ծախսը 1 քառ. մետր ճանապարհահատվածի համար միջինացված հաշվարկով կազմել է 8310 ՀՀ դրամ: Կապիտալ ծախսի արժեքը նվազել է 2852 դրամով կամ 25,5%-ով: Նշենք, որ 2018թ. 1 քառ. մետր կապիտալ շինարարության ծախսը նվազել է նաև 2016 և 2015 թվականների համեմատ:

Տարբեր տարիներին ընթացիկ նորոգված կամ հիմնանորոգված փողոցների համադրումից պարզվեց, որ կան փողոցներ, որոնք ամեն տարի ընթացիկ նորոգման են ենթարկվում՝ անգամ հիմնանորոգումից հետո: 2016թ. ընթացիկ նորոգված 70 փողոցներից 33-ը 2017թ. ևս ընթացիկ նորոգման են ենթարկվել: Իհարկե, նորոգված տարածքները կարող են լինել միևնույն փողոցի տարբեր հատվածներ, սակայն ուշագրավ է այն, որ այս 33 փողոցներից 3-ը 2015թ. հիմնանորոգվել են, իսկ 2017թ. 33-ից 32 փողոցում արդեն երրորդ անգամ ընթացիկ նորոգման աշխատանքներ են իրականացվել: 2018թ. ընթացիկ նորոգման ենթարկված 68 փողոցներից 27-ը (39,7%) չորրորդ տարին անընդմեջ ենթարկվել են ընթացիկ նորոգման, իսկ 15-ը (22%) երրորդ տարին անընդմեջ:

Ուշագրավն այն է, որ այս փողոցների ցանկում կան փողոցներ, որոնք 2018թ. ընթացքում երկրորդ անգամ են ենթարկվել ընթացիկ նորոգման՝ 13 փողոց կամ ընթացիկ նորոգված փողոցների 13%-ը: Սա խոսում է ընթացիկ նորոգումների ոչ արդյունավետության, ինչպես նաև հիմնանորոգված փողոցներում արված աշխատանքի ցածր որակի մասին: Նշենք, որ 2015թ. հիմնանորոգված երկու փողոցները, որոնցում հաջորդ տարիներին ընթացիկ վերականգման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտություն է առաջացել, իրականացվել են «Մերձնուկոյան» ՍՊԸ կողմից, իսկ մեկը՝ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ կողմից: Հարկ է նշել, որ 2018թ. «Մերձնուկոյան» ԲԲԸ հետ պայմանագրեր չեն կնքվել, իսկ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրում ձեռքբերման գինը նախորդ տարիների համեմատ նվազել է 40-50%-ով: Մյուս կազմակերպությունների կողմից հիմնանորոգված ճանապարհներում դիտարկվող ժամանակահատվածում ընթացիկ նորոգումներ չեն իրականացվել:

Անդրադառնալով հետազոտության մյուս խնդիրներին՝ նշենք, որ թեպետ 2015-2017թթ. պայմանագրերը չհաջողվեց ձեռքբերել, սակայն հարցումներին ի պատասխան ստացել ենք տեղեկատվություն կապալառուի կողմից պայմանագրերով սահմանված պարտականությունները ժամկետում չիրականացնելու և շինաշխատանքների որակի վերահսկման մեթոդաբանության վերաբերյալ: Ի պատասխան նշել են, որ որակի վերահսկման նպատակով իրականացվում են լաբորատոր փորձաքննություններ ըստ անհրաժեշտության, ընդ որում, հանույթների քանակը կրկին ըստ

անհրաժեշտության է որոշվում: Ըստ տրված տեղեկատվության, մեկ հանույթը արժեցել է մոտ 25,000 ՀՀ դրամ:

Գնային շուկայի մասին պատկերացում կազմելու համար նշենք, որ մեր կողմից իրականացված լաբորատոր փորձաքննության համար կատարված գնահարցման ժամանակ, «Փ.Աբաջյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնացուցակի համաձայն, խճային փորձարկումների արժեքը կազմել է 25,000 ՀՀ դրամ, իսկ անջրանցիկության, բետոնի մաշելիության մեկ փորձարկման արժեքը՝ 70,000-72,000 ՀՀ դրամ: Գտնում ենք, որ սրանք ավելի կարևոր չափանիշներ են ասֆալտաբետոնի որակը որոշելու տեսանկյունից:

Ինչ վերաբերում է պայմանագրային ժամկետների շեղումների պատճառով առաջացած տույժ տուգանքների կիրառմանը, նշել են, որ ժամկետային շեղումներ չեն եղել և տույժ-տուգանքներ չեն կիրառվել: 2018թ. ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորվող փողոցաշինության ծրագրի ժամանակ պայմանագրի ժամկետային խախտումների առկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ նախկինում ևս եղել են շեղումներ, որոնք չեն արձանագրվել: Այսուհանդերձ պետք է փաստել, որ տույժ-տուգանքներ չի կիրառվել:

Հետազոտության առջև դրված խնդիրներից ելնելով՝ ուսումնասիրվել է նաև 2018թ. գնման պայմանագրերի մի մասը, որոնք հաջողվեց գտնել «armeps.am» կայքում: Պայմանագրերում ուշագրավն այն է, որ 3.4.9 կետում նշվում է.

«Պայմանագրով երաշխիքային ժամկետ է համարվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1460 /որոշ պայմանագրերում 365 օր/ օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները»:

Հղումով մեկնաբանությունում նշված է.

«Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր»:

Նախագծային փաստաթղթերը ևս, մեր հարցմանն ի պատասխան, չեն տրամադրվել: Մտացվում է, որ եթե նախագծային փաստաթղթերում նշված չլինեն երաշխիքային սպասարկման պայմանները, ապա աշխատանքների իրականացումից առաջ կազմված նախագծային փաստաթղթերը կապալառու կազմակերպությանն ազատում են անբարեխիղճ աշխատանքի դիմաց պատասխանատվությունից:

ԲԱԺԻՆ 3. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

3.1 Մասնակցային մոնիտորինգի իրականացման մեթոդաբանություն

Դաշտային աշխատանքներ և մոնիտորինգային այցերի քանակ: Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2018թ. հոկտեմբերի 10-ից մինչ 2018թ. նոյեմբերի 15-ը, նրանցում ներգրավված են եղել 15 քաղաքացի-մոնիթորներ: Ընդհանուր առմամբ, շինարարության իրականացման յուրաքանչյուր հատվածում մոնիտորինգային խմբի կողմից կատարվել է **շաբաթական 2 այց**. ընդհանուր առմամբ, իրականացվել է 15 այց:

Մոնիտորինգային ցուցանիշներ

Մոնիտորինգի համար սահմանվել են հետևյալ ցուցանիշները՝

Ցուցանիշ A: Վերանորոգված 100 մետր ճանապարհի համար բացահայտված խնդիրների քանակ (ընդամենը). $-A = B/L$ (A =շեղումների գործակից, B - բացահայտված խնդիրների քանակ, L – իրականացված ճանապարհի երկարություն):

Խնդիր են համարվում սահմանված շինարարական նորմատիվային չափորոշիչներից շեղումը, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության և հանրային առողջության և անվտանգության վրա բացասական ազդեցության դեպքերը:

Ցուցանիշ A₁: Վերանորոգված 100 մետր ճանապարհի համար բացահայտված խնդիրների քանակ (ընդամենը), որոնք վերաբերում են որակի նորմերին - $A_1 = B_1/L$ (A_1 =նորմատիվային շեղումների գործակից, B - բացահայտված խնդիրների քանակ, որոնք վերաբերում են որակի նորմերին, L – իրականացված ճանապարհի երկարություն):

Ցուցանիշ FR: Լուծման գործակից (Fixed rate)– $FR = R/B * 100\%$ (FR – լուծման գործակից, R – արձանագրված խնդիրների քանակ, որոնք լուծվել են հոգուտ բոլոր շահառուների, B - բացահայտված խնդիրների քանակ): Լուծման ցուցանիշը մշտադիտարկողների կողմից բացահայտված խնդիրների տոկոսն է, որոնք լուծվել են ի բավարարություն բոլոր շահառուների:

3.2 Քաղաքացի-մոնիթորների վերապատրաստում

Քաղաքացի մոնիթորների ընտրությունն իրականացվել է մրցութային հայտարարության միջոցով: Ընտրված մոնիթորների վերապատրաստման համար կազմակերպվել է մեկօրյա դասընթաց, որի միջոցով մոնիթորներն ստացել են մոնիթորինգ իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:

Դասընթացը բաղկացած է եղել տեսական և գործնական մասերից: Տեսական մասի ընթացքում քաղաքացի մոնիթորները ծանոթացել են մասնակցային մոնիթորինգի հասկացությանը, նպատակներին, ծրագրի նպատակներին, մշակված մեթոդաբանությանը և գործիքներին: Գործնական դասընթացի շրջանակներում իրականացվել է մասնակիցների՝ մոնիթորինգ իրականացնելու հմտությունների կիրառման զարգացում, որոնք անհրաժեշտ են դաշտային աշխատանքների իրականացման համար: Դասընթացն իրականացվել է ըստ նախապես մշակված դասընթացի պլանի և օրակարգի: Դասընթացի տեսական և գործնական մասերն անդրադարձել են, մասնավորապես, հետևյալ ոլորտներին.

Տեսական մաս

- «Հանրությանը մատուցվող ծառայությունների մասնակցային մոնիթորինգ և սոցիալական հաշվետվողականության խթանում» ծրագրի նպատակը, կառուցվածքը
- Մասնակիցներին ներկայացվել են մասնակցային մոնիթորինգի հասկացությունը, նպատակը և գործիքները
- Մասնակիցներին ներկայացվել են մասնակցային մոնիթորինգին հարող հիմնական գաղափարները՝ հաշվետվողականություն, էթիկական վարքագիծ, կոռուպցիոն հսկողության մեխանիզմներ, «հորիզոնական հաշվետվողականության» համակարգ և այլն
- Մասնակիցներին ներկայացվել են մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը, մեթոդները և գործիքները
- Մասնակիցներին ներկայացվել են տեխնիկական բնութագրերը և նորմատիվային չափորոշիչները, որոնք պետք է պահպանվեն շինարարության ընթացքում:

Գործնական մաս

- Գործնական դասընթացի ընթացքում մասնակիցները ծրագրի համակարգողների և տեխնիկական խորհրդատուների ուղեկցությամբ այցելել են շինարարության վայրեր և տեղում ծանոթացել են մոնիթորինգի ենթակա տարածքներին, կիրառել են մոնիթորինգային գործիքները:

Մասնակից մոնիթորների համար որպես վերապատրաստման սկզբունք սահմանվել են հետևյալ կարևոր ասպեկտները.

- Ծրագրի ավարտից հետո քաղաքացի-մոնիթորները պետք է կարևորեն մասնակցային մոնիթորինգի նշանակությունը որպես համայնքային հիմնախնդիրները լուծման գործիք
- Ծրագրի ավարտից հետո քաղաքացի-մոնիթորները պետք է գիտակցեն, որ քաղաքացիների ներգրավումը գործընթաց է, որը պետք է շարունակական լինի՝ հնարավոր դարձնելով հարաբերությունների զարգացումը և վստահության կառուցումն ու ամրապնդումը ժամանակի ընթացքում:

3.3 Փողոցաշինական աշխատանքների դիտարկման արդյունքներ

3.3.1 Շինարարական աշխատանքների ընթացքում նորմատիվային պահանջների պահպանման մշտադիտարկման արդյունքներ

Վազգեն Սարգսյան փողոցում մոնիտորինգային 3 այցերի ընթացքում իրականացվելիս են եղել եզրաքարերի տեղադրման և հիմնական երթևեկելի մասում հողային հիմքի ամրացման աշխատանքներ: Եզրաքարերի տեղադրման հետ կապված նորմատիվային և նախագծային պահանջները հիմնականում պահպանվում էին՝ բացառությամբ մեկ դեպքի, երբ մայթի եզրաքարերի ստորին շերտերի լայնությունը պակաս է եղել սահմանված նորմատիվից 1.5 սմ-ով: Որոշ դեպքերում մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները նույնիսկ գերազանցել են սահմանված նվազագույն շեմերը:

Նկար 3. Վ. Սարգսյան փողոց



Այս տարածքում արձանագրված հիմնական խնդիրը վերաբերում է շինարարական աշխատանքների իրականացման հետևանքով վարորդների և բնակիչների ազատ տեղաշարժի խոչընդոտմանը, ինչը պայմանավորված է շինարարական աղբը և հողի հեռացված շերտը մայթերին և փողոցի երթևեկելի հատվածում կուտակելով: Այս տարածքում արձանագրված խնդիրներից է եղել նոր տեղադրվող սալիկների թվում վնասված և ոչ պիտանի սալիկների հայտնաբերումը:

Բացի այդ, առաջին իսկ անձրևային տեղումներից հետո Վ. Սարգսյան փողոցի մայթերի որոշ հատվածներում մայթեզրերը քանդվել են՝ առանձնանալով բետոնե շերտից:

Նկար 4. Վ. Մարգսյան փողոցի քանդված մայթերը



Գարեգին Նժդեհի փողոցում մոնիտորինգային 2 այցերի ընթացքում իրականացվելիս են եղել ջրահեռացման վաքերի կառուցման և եզրաքարերի տեղադրման աշխատանքներ:

Այստեղ նույնպես հիմնականում պահպանված են եղել սահմանված նորմերը, թեև որոշ դեպքերում մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները 1 սմ-ով պակաս են եղել սահմանված նորմերից, իսկ մեկ չափման դեպքում՝ նույնիսկ 9 սմ-ով:

Նոր տեղադրվող եզրաքարերի և սալիկների թվում առկա չեն եղել վնասված և ոչ պիտանի

եզրաքարեր և սալիկներ:

Նկար 5. Գ. Նժդեհի փողոց



Մոնիտորինգի ընթացքում, սակայն, քաղաքացի-մոնիթորների կողմից փողոցի մի շարք հատվածներում նկատվել են մայթերի սալիկների ու բետոնե շերտի անջատում՝ փշրվող բետոնի պատճառով:

Մուշ-2 թաղամաս տանող ճանապարհում մոնիտորինգային այցերի ընթացքում իրականացվելիս են եղել եզրաքարերի տեղադրման աշխատանքներ: Այստեղ կատարված որոշ չափումների դեպքում բացահայտել է, որ պահպանված չեն եղել իրականացվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի համար սահմանված հաստությունները և լայնությունները: Արձանագրված շեղումները կազմել են 1-5 սմ: Ինչ վերաբերում է նոր տեղադրվող եզրաքարերին, ապա դրանց մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի եզրաքարեր: Մուշ-2 թաղամաս տանող հատվածը եղել է միակ փողոցը, որի շինարարական

աշխատանքներն ավարտին են հասցվել մոնիտորինգի ընթացքում, և հնարավորություն է առաջացել ստուգելու նաև ասֆալտե շերտի որակը:

Նկար 6. Մուշ-2 թաղամաս տանող հատված



Երևանյան խճուղում կատարված 5 մոնիտորինգային այցերի ընթացքում իրականացվելիս են եղել հիմնական երթևեկելի մասում երկշերտ ասֆալտաբետոնի և եզրաքարերի տեղադրման աշխատանքներ: Այստեղ հիմնականում պահպանված են եղել սահմանված նորմատիվային պահանջները, սակայն առանձին դեպքերում արձանագրվել են 1-3 սմ շեղումներ: Մինևույն ժամանակ, արձանագրվել են դեպքեր, երբ շերտերի հաստությունները գերազանցել են սահմանված նորմերը 1 կամ 3 սմ-ով: Պահպանված է եղել նաև ասֆալտի ջերմաստիճանի համար սահմանված նորմը: Նոր տեղադրվող եզրաքարերի մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի եզրաքարեր:

Նկար 7. Երևանյան խճուղի



Քանի որ Երևանյան խճուղին քաղաք մտնող մայրուղիներից և քաղաքի ծանրաբեռնված փողոցներից մեկը, այս տարածքի շինարարության ընթացքում և՛ վարորդներից, և՛ բնակիչներից, և՛ անցորդներից անընդհատ դժգոհություններ են հնչել, որոնք հիմնականում վերաբերել են շինարարության ընթացքում վերջիններիս պատճառած անհարմարություններին: Բացի այդ, ճանապարհային երթևեկության նշանները,

որոնք տեղադրվել են՝ պայմանավորված փողոցի շինարարական աշխատանքներով, երբեմն տեղադրվել են ոչ ճիշտ վայրում կամ ոչ թույլատրելի հեռավորության վրա, ինչը վարորդներին անհարմարություններ է պատճառել:

Ջիվանու փողոցում կատարված մոնիտորինգային այցերի ընթացքում իրականացվելիս են եղել հիմնական երթևեկելի մասում երկշերտ ասֆալտաբետոնի, մայթերի սալարկման և եզրաքարերի տեղադրման աշխատանքներ: Այստեղ արձանագրվել են շեղումներ հիմնական երթևեկելի մասում երկշերտ ասֆալտաբետոնի իրականացման դեպքում շերտերի հաստությունների նորմերի պահպանման առումով, որտեղ շեղումը կազմել է 5-ից 6 սմ: Իրականացված մյուս չափումների դեպքում նորմատիվները կա՛մ պահպանված են եղել, կա՛մ գերազանցել են սահմանված նվազագույն շեմերը: Նոր տեղադրվող եզրաքարերի և սալիկների մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի եզրաքարեր և սալիկներ:

Նկար 8. Ջիվանու փողոց



Մշտադիտարկման արդյունքներն առավել մանրամասն՝ ըստ տարբեր ցուցանիշների, ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9.

Վազգեն Սարգսյան փողոց

Մոնիտորինգային այց՝ 12.10.2018

	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
Եզրաքարերի տեղադրում	Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (հաստություն)	10սմ	15 սմ	+5 սմ
	Տեղադրվող եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտաբետոնից վերև եղած հատվածը	Բետոն (լայնություն)	30 սմ	15 սմ	-15 սմ
	Նոր տեղադրվող եզրաքարերի և սալիկների մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի եզրաքարեր և սալիկներ:			13-17սմ	15-17 սմ

Մոնիտորինգային այց՝ 18.10.2018

	Չափորոշիչ	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում	
Եզրաքարերի տեղադրում	Տեղադրվող եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտաբետոնից վերև եղած հատվածը		13-17սմ	16-19 սմ	2 սմ
	Նոր տեղադրվող սալիկների մեջ եղել են վնասված և ոչ պիտանի սալիկներ:				

Մոնիտորինգային այց՝ 25.10.2018

	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
Եզրաքարերի տեղադրում, հիմնական երթևեկելի մասի հողային հիմքի ամրացում	Չափում 1. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (հաստություն)	10սմ	15 սմ	+5 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	30 սմ	0 սմ
	Չափում 2. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (հաստություն)	10սմ	14 սմ	+4 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	28 սմ	-2 սմ
	Չափում 3. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (հաստություն)	10սմ	15 սմ	+5 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	30 սմ	0 սմ

լայնությունները			
Տեղադրվող եզրաքարի՝ երթնեկեղի մասի ասֆալտաբետոնից վերև եղած հատվածը	13-17սմ	14-16 սմ	0 սմ
Նոր տեղադրվող եզրաքարերի և սալիկների մեջ եղել են վնասված և ոչ պիտանի եզրաքարեր և սալիկներ:			

Գարեգին Նժդեհի փողոց

Մոնիտորինգային այց՝ 14.10.2018

	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
Եզրաքարերի տեղադրում	Չափում 1. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (հաստություն)	10սմ	9 սմ	-1 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	30 սմ	0 սմ
	Չափում 2. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (հաստություն)	10սմ	9 սմ	-1 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	30 սմ	0 սմ
	Չափում 3. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (հաստություն)	10սմ	9 սմ	-1 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	30 սմ	0 սմ
	Տեղադրվող եզրաքարի՝ երթնեկեղի մասի ասֆալտաբետոնից վերև եղած հատվածը		13-17սմ	15 սմ	0 սմ
Նոր իրականացվող սալիկների մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի սալիկներ:					

Մոնիտորինգային այց՝ 02.11.2018

	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
Եզրաքարերի տեղադրում	Չափում 1. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (հաստություն)	10սմ	9 սմ	-1 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	30 սմ	0 սմ
	Չափում 2. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (հաստություն)	10սմ	9 սմ	-1 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	21 սմ	-9 սմ

Չափում 3. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (հաստություն)	10սմ	9 սմ	-1 սմ
	Բետոն (լայնություն)	30 սմ	30 սմ	0 սմ
Տեղադրվող եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտաբետոնից վերև եղած հատվածը		13-17սմ	15 սմ	0 սմ

Նոր իրականացվող եզրաքարերի և սալիկների մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի եզրաքարեր և սալիկներ:

Մուշ-2 թաղամաս տանող ճանապարհ

Մոնիտորինգային այց՝ 11.10.2018

Եզրաքարերի տեղադրում	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
	Չափում 1. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Իսիճ (հաստություն)	Բետոն (հաստություն)	5 սմ	5 սմ
		Բետոն (հաստություն)	10 սմ	10 սմ	0 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	28 սմ	-2 սմ
Չափում 2. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Իսիճ (հաստություն)	Բետոն (հաստություն)	5 սմ	4 սմ	-1 սմ
		Բետոն (հաստություն)	10 սմ	10 սմ	0 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	26 սմ	-4 սմ
Չափում 3. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Իսիճ (հաստություն)	Բետոն (հաստություն)	5 սմ	4 սմ	-1 սմ
		Բետոն (հաստություն)	10 սմ	9 սմ	-1 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	25 սմ	-5 սմ
Տեղադրվող եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտաբետոնից վերև եղած հատվածը			13-17սմ	16-20սմ	3 սմ

Նոր տեղադրող եզրաքարերի մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի եզրաքարեր:

Երևանյան խճուղի

Մոնիտորինգային այց՝ 14.10.2018

Հիմնական երթևեկելի մասի	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
-------------------------	-----------	--------	----------------------------	-----------------------	--------

ասֆալտապատում	Չափում 1. Փովող ասֆալտի շերտերի հաստությունները	Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	3 սմ	0 սմ
Մայրերի կառուցում	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
	Չափում 1. Կառուցվող մայրի շերտերի հաստությունը	խճային կամ ավազակոպճային շերտ	10-15սմ	12 սմ	0 սմ
		Ասֆալտաբետոնե շերտ	3-4սմ	3 սմ	0 սմ

Մոնիտորինգային այց՝ 15.10.2018

Հիմնական երթևեկելի մասում երկշերտ ասֆալտաբետոն փռելը	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում	
	Չափում 1. Փովող ասֆալտի շերտերի հաստությունները.	Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	3 սմ	0 սմ	
Եզրաքարերի տեղադրում	Չափում 2. Կառուցվող մայրի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն) Բետոն (հաստություն)	5 սմ 10 սմ	5 սմ 9 սմ	0 սմ -1 սմ	
	Չափում 3. Կառուցվող մայրի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (լայնություն) Խիճ (հաստություն) Բետոն (հաստություն)	30 սմ 5սմ 10սմ	30 սմ 5 սմ 10 սմ	0 սմ 0 սմ -1 սմ	
	Չափում 4. Կառուցվող մայրի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (լայնություն) Խիճ (հաստություն) Բետոն (հաստություն)	30 սմ 5սմ 10սմ	28 սմ 5 սմ 10 սմ	-2 սմ 0 սմ 0 սմ	
	Եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտաբետոնից վերև եղած հատվածը	Բետոն (լայնություն)	30 սմ	29 սմ	-1 սմ	
				13-17սմ	18-21 սմ	+ 4 սմ
	Ասֆալտի ջերմաստիճան	Փովող ասֆալտի ջերմաստիճանը	Չափում ինքնաթափ մեքենայի թափքում	min 130°C – max 160°C	150 °C	0 °C
			Չափում նոր փովող ասֆալտի համար	min 130°C – max 160°C	140°C	0 °C

Մոնիտորինգային այց՝ 15.10.2018

Հիմնական երթևեկելի մասում երկշերտ ասֆալտաբետոն փռելը	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
	Չափում 1. Փովող ասֆալտի շերտերի հաստությունները	Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	3 սմ	0 սմ

	Չափում 2. Փոփոզվող ասֆալտի շերտերի հաստությունները	Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	4 սմ	+1 սմ	
Եզրաքարերի տեղադրում	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում	
	Չափում 1. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն) Բետոն (հաստություն) Բետոն (լայնություն)	5 սմ 10 սմ 30 սմ	5 սմ 9 սմ 31 սմ	5 սմ -1 սմ +1 սմ	
	Չափում 2. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն) Բետոն (հաստություն) Բետոն (լայնություն)	5սմ 10սմ 30 սմ	5 սմ 10 սմ 29 սմ	0 սմ 0 սմ -1 սմ	
	Չափում 3. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն) Բետոն (հաստություն) Բետոն (լայնություն)	5սմ 10սմ 30 սմ	5 սմ 11 սմ 30 սմ	5 սմ +1 սմ 30 սմ	
	Եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտաբետոնից վերև եղած հատվածը		13-17սմ	15-20 սմ	+3 սմ	
	Նոր տեղադրվող եզրաքարերի մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի եզրաքարեր:					

Մոնիտորինգային այց՝ 25.10.2018

Հիմնական երթևեկելի մասի ասֆալտապատում	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
	Չափում 1. Փոփոզվող ասֆալտի շերտերի հաստությունները	Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	4 սմ	+1 սմ
	Չափում 2. Փոփոզվող ասֆալտի շերտերի հաստությունները	Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	3 սմ	0 սմ
Եզրաքարերի տեղադրում	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
	Չափում 1. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն) Բետոն (հաստություն) Բետոն (լայնություն)	5 սմ 10 սմ 30 սմ	6 սմ 10 սմ 30 սմ	+1 սմ 0 սմ 0 սմ
	Չափում 2. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն) Բետոն (հաստություն) Բետոն (լայնություն)	5 սմ 10 սմ 30 սմ	5 սմ 10 սմ 30 սմ	0 սմ 0 սմ 0 սմ
	Չափում 3. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն) Բետոն (հաստություն) Բետոն (լայնություն)	5 սմ 10 սմ 30 սմ	5 սմ 9 սմ 27 սմ	0 սմ -1 սմ -3 սմ

Եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտաբետոնից վերև եղած հատվածը	13-17սմ	17-20 սմ	+3 սմ
---	---------	----------	-------

Նոր տեղադրվող եզրաքարերի մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի եզրաքարեր:

Մոնիտորինգային այց՝ 27.10.2018

Հիմնական երթևեկելի մասում երկշերտ ասֆալտաբետոն փռելը	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
	Չափում 1. Փոփող ասֆալտի շերտերի հաստությունները	Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	4 սմ	+1 սմ
	Չափում 2. Փոփող ասֆալտի շերտերի հաստությունները	Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	3 սմ	0 սմ
	Չափում 3. Փոփող ասֆալտի շերտերի հաստությունները	Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	3 սմ	0 սմ
Եզրաքարերի տեղադրում	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
	Չափում 1. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն)	5 սմ	5 սմ	0 սմ
		Բետոն (հաստություն)	10 սմ	10 սմ	0 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	30 սմ	0 սմ
	Չափում 2. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն)	5սմ	5 սմ	0 սմ
		Բետոն (հաստություն)	10սմ	9 սմ	-1 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	30 սմ	0 սմ
	Չափում 3. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն)	5սմ	7 սմ	+2 սմ
		Բետոն (հաստություն)	10սմ	10 սմ	0 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	30 սմ	0 սմ
Եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտաբետոնից վերև եղած հատվածը			13-17սմ	17-19 սմ	+2 սմ
Նոր տեղադրվող եզրաքարերի մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի եզրաքարեր:					

Ջիվանու փողոց

Մոնիտորինգային այց՝ 04.11.2018

Մայթերի սալարկում	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
-------------------	-----------	--------	----------------------------	-----------------------	--------

	Չափում 1. Կառուցվող մայթի շերտերի հաստությունը	Խճային հիմք	5 սմ	6,5 սմ	+1,5 սմ
		Բետոն B15	10 սմ	9 սմ	-1 սմ
		Ասֆալտաբետոնե շերտ	5 սմ	-	-
	Չափում 2. Կառուցվող մայթի շերտերի հաստությունը	Խճային հիմք	5 սմ	6,5 սմ	+1,5 սմ
		Բետոն B15	10 սմ	9 սմ	-1 սմ
		Ասֆալտաբետոնե շերտ	5 սմ	-	-
Եզրաքարերի տեղադրում	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
	Չափում 1. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն)	5 սմ	4 սմ	-1 սմ
		Բետոն (հաստություն)	10 սմ	13 սմ	+3 սմ
	Չափում 2. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Բետոն (լայնություն)	30 սմ	35 սմ	+5 սմ
		Խիճ (հաստություն)	5 սմ	5 սմ	0 սմ
		Բետոն (հաստություն)	10 սմ	12 սմ	+2 սմ
Բետոն (լայնություն)		30 սմ	34 սմ	+4 սմ	
Նոր տեղադրվող եզրաքարերի և սալիկների մեջ չեն եղել վնասված և ոչ պիտանի եզրաքարեր և սալիկներ:					

Մոնիտորինգային այց՝ 12.11.2018

	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
Հիմնական երթևեկելի մասում երկշերտ ասֆալտաբետոն փռելը	Չափում 1. Փռվող ասֆալտի շերտերի հաստությունները	Խճային հիմք	20 սմ	15 սմ	- 5 սմ
		Բետոն B15	15 սմ	-	-
		Խճային հիմք բիտումի տարածումով	10 սմ	4 սմ	- 6 սմ
		Բազալտե սալարկում	12 սմ	-	-
		Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	-	-
	Չափում 2. Փռվող ասֆալտի շերտերի հաստությունները	Խճային հիմք	20 սմ	15 սմ	+ 5 սմ
		Բետոն B15	15 սմ	-	-
		Խճային հիմք բիտումի տարածումով	10 սմ	4 սմ	- 6 սմ
		Բազալտե սալարկում	12 սմ	-	-
		Մանրահատիկ	3 սմ	-	-

		ասֆալտաբետոն			
Մայթերի սալարկում	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
	Մայթերի սալարկում	Չափում 1. Կառուցվող մայթի շերտերի հաստությունը	խճային հիմք	5 սմ	6,5 սմ
Բետոն B15			10 սմ	9 սմ	-1 սմ
Ասֆալտաբետոնե շերտ			5 սմ	5 սմ	0 սմ
Չափում 2. կառուցվող մայթի շերտերի հաստությունը		խճային հիմք	5 սմ	6 սմ	+1 սմ
		Բետոն B15	10 սմ	9 սմ	-1 սմ
		Ասֆալտաբետոնե շերտ	5 սմ	5 սմ	0 սմ
Եզրաքարերի տեղադրում	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	Շեղում
	Չափում 1. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները	Խիճ (հաստություն)	5 սմ	4 սմ	-1 սմ
Բետոն (հաստություն)		10 սմ	13 սմ	+3 սմ	
Բետոն (լայնություն)		30 սմ	35 սմ	5 սմ	
Չափում 2. Կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները		Խիճ (հաստություն)	5 սմ	5 սմ	0 սմ
		Բետոն (հաստություն)	10 սմ	12 սմ	+2 սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	34 սմ	+4 սմ

3.3.2 Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անվտանգության և բնապահպանական նորմերի պահպանման դիտարկում

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անվտանգության նորմերի պահպանման շրջանակներում արձանագրվել են մի շարք խնդիրներ մշտադիտարկման ենթարկված բոլոր փողոցներում: Արձանագրված հիմնական խնդիրն առնչվել է շինարարության վայրերում մեքենաների և հետիոտների անվտանգ երթևեկության համար ձեռնարկված միջոցառումների թերացումներին: Մասնավորապես, դիտարկված բոլոր փողոցներում բացակայել են հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումները (մուտքի արգելքներ, ժամանակավոր կամրջակների տեղադրում և այլն):

Մուշ 2 թաղամաս տանող ճանապարհի և Վազգեն Սարգսյան փողոցի դեպքում արձանագրվել է, որ շինանյութերը և թափոնները տեղափոխվել են բաց թափքով մեքենաներով: Գարեգին Նժդեհի փողոցում եղել են թերացումներ ինչպես երթևեկության կարգավորման և հետիոտների տեղաշարժի անվտանգության ապահովման առումով, այնպես էլ շինարարական հրապարակում կուտակված է եղել կենցաղային և շինարարական աղբ:

Տեխնիկական վերահսկիչ կազմակերպության ներկայացուցիչը ներկա չի եղել շինհրապարակում Վազգեն Սարգսյան և Ջիվանու փողոցներում կատարված մեկական այցերի ընթացքում:

Երևանյան խճուղու դեպքում կարող ենք արձանագրել, որ մոնիտորինգային առաջին այցերի ընթացքում արձանագրված խնդիրները հետագա այցերի ընթացքում լուծված են եղել, ինչպես, օրինակ, ժամանակավոր ճանապարհային նշանների տեղադրումը, հետիոտների անվտանգ տեղաշարժի համար միջոցառումներ ձեռնարկելը: Այստեղ, սակայն, ոչ բոլոր աշխատակիցներն են կրել արտահագուստ և պաշտպանիչ սաղավարտներ:

Ինչ վերաբերում է բնապահպանական նորմերի պահպանությանը, ապա այստեղ հիմնական խնդիրը առնչվել է շինհրապարակում տարածված փոշուն և կուտակված կենցաղային և շինարարական աղբին: Մոնիտորինգային այցելության ընթացքում շինարարական փոշին տարածված է եղել Մուշ 2 թաղամաս տանող ճանապարհի, Վազգեն Սարգսյան փողոցի, Երևանյան խճուղու և Ջիվանու փողոցների դեպքում: Վազգեն Սարգսյան փողոցում մոնիտորինգային այցի ընթացքում շինհրապարակում կուտակված է եղել կենցաղային և շինարարական աղբ, փողոցի ամբողջ երկայնքով առկա են եղել կոտրված սալիկների մնացորդներ: Այսպիսի խնդիր է արձանագրվել նաև Գարեգին Նժդեհի փողոցում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անվտանգության և բնապահպանական նորմերի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքներն առավել մանրամասն ներկայացված են ստորև Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10.

Մշտադիտարկման ամիս/ամսաթիվ	Իրականացվող աշխատանքների տիպ	Բացահայտված խնդիրներ
Մուշ 2 թաղամաս տանող ճանապարհ		
11.10.2018	Եզրաքարերի տեղադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարության վայրում ձեռնարկված չեն եղել հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումները ▪ Շինարարական տեխնիկայի տեղաշարժի ընթացքում մեքենաների երթևեկության և հետիոտնի տեղաշարժի կարգավորում չի իրականացվել ▪ Ոչ բոլոր աշխատակիցներն են կրել արտահագուստ, պաշտպանիչ ձեռնոցներ և սաղավարտներ ▪ Շինհրապարակում աշխատել են սակավաթիվ աշխատակիցներ ▪ Շինանյութերը և թափոնները տեղափոխվել են բաց թափքով մեքենաներով
28.10.2018	Հիմնական երթևեկելի մասում հողային հիմքի ամրացում	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարության վայրում ձեռնարկված չեն եղել հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումներ ▪ Շինարարական տեխնիկայի տեղաշարժի ընթացքում մեքենաների երթևեկության և հետիոտնի տեղաշարժի կարգավորում չի իրականացվել ▪ Ոչ բոլոր աշխատակիցներն են կրել պաշտպանիչ ձեռնոցներ և սաղավարտներ ▪ Շինարարության հրապարակում տարածված է եղել շինարարական փոշի ▪ Շինանյութերը և թափոնները տեղափոխվել են բաց թափքով մեքենաներով
Վազգեն Սարգսյան փողոց		
12.10.2018	Եզրաքարերի տեղադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարության վայրում ձեռնարկված չեն եղել հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումներ ▪ Շինարարության հրապարակում տարածված է եղել շինարարական փոշի ▪ Շինարարության հրապարակում կուտակված են եղել կենցաղային և շինարարական աղբ
18.10.2018	Եզրաքարերի տեղադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարության վայրում ձեռնարկված չեն եղել հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումներ ▪ Շինարարության հրապարակում կուտակված է եղել կենցաղային և շինարարական աղբ, փողոցի ամբողջ երկայնքով առկա են եղել կոտրված սալիկների մնացորդներ ▪ Ոչ բոլոր աշխատակիցներն են կրել պաշտպանիչ ձեռնոցներ և սաղավարտներ ▪ Տեխնիկական վերահսկիչ կազմակերպության ներկայացուցիչը ներկա չի եղել շինհրապարակում ▪ Շինարարության հրապարակում տարածված է եղել շինարարական փոշի ▪ Շինանյութերը և թափոնները տեղափոխվել են բաց թափքով մեքենաներով
25.10.2018	Եզրաքարերի տեղադրում Հիմնական երթևեկելի	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարության վայրում ձեռնարկված չեն եղել հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումներ

	մասում հողային հիմքի ամրացում	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարական տեխնիկայի տեղաշարժի ընթացքում մեքենաների երթևեկության և հետիոտնի տեղաշարժի կարգավորում չի իրականացվել
Երևանյան խճուղի		
14.10.2018	Հիմնական երթևեկելի մասում ասֆալտապատում Ջրահեռացման վաքերի կառուցում Մայթերի մակերևույթի ասֆալտապատում Եզրաքարերի տեղադրում Ճանապարհային նշանների վերատեղադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում ժամանակավոր ճանապարհային նշաններ տեղադրված են եղել մասնակի ▪ Շինարարության վայրում ձեռնարկված չեն եղել հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումներ
15.10.2018	Ջրահեռացման վաքերի կառուցում Եզրաքարերի տեղադրում Ճանապարհային նշանների վերատեղադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում ժամանակավոր ճանապարհային նշաններ տեղադրված են եղել մասնակի ▪ Շինարարության վայրում ձեռնարկված չեն եղել հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումներ ▪ Շինարարական տեխնիկայի տեղաշարժի ընթացքում մեքենաների երթևեկության և հետիոտնի տեղաշարժի կարգավորում չի իրականացվել ▪ Շինարարության հրապարակում տարածված է եղել շինարարական փոշի
20.10.2018	Հիմնական երթևեկելի մասի ասֆալտապատում Անձրևահորերի, ստորգետնյա խողովակաշարերի կառուցում Մայթերի մակերևույթի ասֆալտապատում Եզրաքարերի տեղադրում Ճանապարհային նշանների վերատեղադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Ոչ բոլոր աշխատակիցներն են կրել արտահագուստ և պաշտպանիչ սաղավարտներ
25.10.2018	Հիմնական երթևեկելի մասի ասֆալտապատում Ջրահեռացման վաքերի	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարության վայրում ձեռնարկված չեն եղել հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումներ ▪ Ոչ բոլոր աշխատակիցներն են կրել արտահագուստ և պաշտպանիչ սաղավարտներ

	կառուցում Մայթերի մակերևույթի ասֆալտապատում Եզրաքարերի տեղադրում Ճանապարհային նշանների վերատեղադրում	
27.10.2018	Հիմնական երթևեկելի մասի ասֆալտապատում Ջրահեռացման վաքերի կառուցում Մայթերի մակերևույթի ասֆալտապատում Եզրաքարերի տեղադրում Ճանապարհային նշանների վերատեղադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Ոչ բոլոր աշխատակիցներն են կրել արտահագուստ և պաշտպանիչ սաղավարտներ

Գարեզին Նժդեհի փողոց

14.10.2018	Ջրահեռացման վաքերի կառուցում Եզրաքարերի տեղադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարության վայրում ձեռնարկված չեն եղել հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումներ ▪ Շինարարական տեխնիկայի տեղաշարժի ընթացքում մեքենաների երթևեկության և հետիոտնի տեղաշարժի կարգավորում չի իրականացվել ▪ Շինարարության հրապարակում կուտակված է եղել կենցաղային և շինարարական աղբ
02.11.2018	Եզրաքարերի տեղադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարական տեխնիկայի տեղաշարժի ընթացքում մեքենաների երթևեկության և հետիոտնի տեղաշարժի կարգավորում չի իրականացվել ▪ Շինարարության հրապարակում կուտակված է եղել կենցաղային և շինարարական աղբ

Ջիվանու փողոց

11.10.2018	Հիմնական երթևեկելի մասում հողային հիմքի ամրացում Ջրահեռացման վաքերի կառուցում	<ul style="list-style-type: none"> ▪ Ոչ բոլոր աշխատակիցներն են կրել արտահագուստ և պաշտպանիչ սաղավարտներ
04.11.2018	Մայթերի սալարկում Եզրաքարերի տեղադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Ոչ բոլոր աշխատակիցներն են կրել արտահագուստ և պաշտպանիչ սաղավարտներ ▪ Տեխնիկական վերահսկիչ կազմակերպության ներկայացուցիչը ներկա չի եղել շինհրապարակում


		<ul style="list-style-type: none"> ▪ Շինհրապարակում տարածված է եղել շինարարական փոշի
12.11.2018	<p>Հիմնական երթևեկելի մասի ասֆալտապատում Մայթերի սալարկում Եզրաքարերի տեղադրում</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարության վայրում ձեռնարկված չեն եղել հետիոտների անվտանգ տեղաշարժի համար նախատեսված միջոցառումներ ▪ Ոչ բոլոր աշխատակիցներն են կրել արտահագուստ և պաշտպանիչ սաղավարտներ ▪ Շինհրապարակում տարածված է եղել շինարարական փոշի

3.3.3 Շինարարության հրապարակներում ներգրավված աշխատակիցների հետ հարցումների արդյունքներ

Դաշտային աշխատանքների իրականացման շրջանակներում հարցումներ են իրականացվել նաև շինարարական հրապարակներում ներգրավված աշխատակիցների հետ: Հարցումը վերաբերել է աշխատանքի հրահանգավորմանը, աշխատաժամանակին, բանվորների համար պատշաճ աշխատանքային պայմանների ապահովմանը: Ընդհանուր առմամբ իրականացվել է 43 հարցում:


Հարցման ենթարկված բոլոր աշխատակիցները նշել են, որ այս կամ այն չափով ստացել են աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորում, և նրանցից ոչ մեկը չի նշել, որ հրահանգավորում ընդհանրապես չի ստացել: «Ե՞րբ եք վերջին անգամ ստացել աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորում» հարցին հարցման ենթարկված բանվորներից 54%-ը պատասխանել են, որ տվյալ օրը առավոտյան, 17-ական % հարցվածներ՝ նախորդ երեք օրերի ընթացքում կամ նախորդ մեկ շաբաթվա ընթացքում: 12% բանվորներ էլ անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորում են ստացել նախորդող երկու շաբաթների կամ վերջին մեկ ամսվա ընթացքում (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորման ստացումը (N)



Ի՞նչ պարբերականությամբ եք ստանում աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորումը» հարցին հարցման ենթարկվածներից 52%-ը պատասխանել են «ամեն օր», 33%-ը՝ «երկուսից երեք օրը մեկ անգամ», իսկ 12%-ը՝ «շաբաթը մեկ անգամ»: 3%-ը պատասխանել են «երկու շաբաթը մեկ անգամ» և «ամիսը մեկ անգամ»:

Գծապատկեր 4. Աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորման ստացման պարբերականությունը (N)




Աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորման ստացման պարբերականությունն ըստ շինարարական հրապարակների ներկայացված է Աղյուսակ 11-ում: Հիմնականում գրեթե բոլոր շինարարական հրապարակներում հրահանգավորում կատարվել է կա՛մ ամեն օր, կա՛մ երկուսից երեք օրը մեկ անգամ:

Աղյուսակ 11. Աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորման ստացման պարբերականությունն ըստ շինարարական հրապարակների (N)

Շինարարության հրապարակ	Ամեն օր	Երկուսից երեք օրը մեկ անգամ	Շաբաթը մեկ անգամ	Երկու շաբաթը մեկ անգամ	Ամիսը մեկ անգամ
Գ. Նժդեհի	9		2		1
Երևանյան խճուղի	4	5		1	
Մուշ 2 տանող	6	4			
Զիվանու	2	3	3		
Վ. Սարգսյան		3			

Ինչ վերաբերում է աշխատանքային ժամերին, ապա մեծամասնության դեպքում նշվել է 8 ժամ պատասխանը: Բանվորների 2%-ը նշել են, որ աշխատում են 10 ժամ, իսկ 1 %-ը նշել է՝ 8-9 ժամ: Մինչև 8 ժամ աշխատողների %-ը կազմում է 16 (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Աշխատանքային ժամերի բաշխվածությունը՝ ըստ հարցման ենթարկվածների պատասխանների (N)



Բոլոր շինհրապարակներում աշխատողներն ապահովված են եղել մաքուր խմելու ջրով՝ բացի Վ. Սարգսյան փողոցի շինհրապարակից: Միայն Գ. Նժդեհի և Մուշ 2 տանող հատվածների աշխատակիցներն են ապահովված եղել պատշաճ սանհանգույցներով: Երևանյան խճուղի, Զիվանու և Վ.Սարգսյան փողոցներում այս պայմաններն ապահովված չեն եղել:

Հարցման ենթարկված աշխատողների գերակշիռ մասը նշել է, որ գործատու կազմակերպության կողմից ապահովվել են արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով (սաղավարտ, ձեռնոցներ): Պահպանվել են ճաշի ընդմիջման ժամերը: Աշխատողների գերակշիռ մասը նշել է, որ ընդմիջման ծախսերը հոգում են սեփական միջոցներով, շատ քիչ մասն է նշել, որ ընդմիջման ծախսերը հոգում է գործատուն կամ հոգում են համատեղ:

3.3.4 Վերանորոգված փողոցների ասֆալտաբետոնե ծածկից վերցված հանուկների լաբորատոր փորձաքննության արդյունքներ

Ծրագրի շրջանակներում Գյումրիում հիմնանորոգված երկու փողոցներից՝ «Կոմիտաս» և «Մուշ 2 թաղամաս տանող» փողոցների ասֆալտաբետոնե ծածկից վերցվել են հանուկներ և ենթարկվել լաբորատոր փորձաքննության՝ անկախ փորձագիտական ընկերությունում:

Ընդհանուր առմամբ, ասֆալտաբետոնե ծածկից վերցված երկու հանուկներն էլ **համապատասխանել են ԳՕՍՏ 9128-2013-ի պահանջներին:**

Նկար 8. Հանուկներ ասֆալտաբետոնե ծածկից



Լաբորատոր փորձաքննության արդյունքները ներկայացվում են «Փորձարկման արձանագրություն N07-126» և «Փորձարկման արձանագրություն N07-127» արձանագրություններում:



«Փ. Աբաջյան» ՍՊԸ ՀՀ Երևան, Աջափնյակ Գ - 1 թաղ. 2/24, հեռ. (060)650392
 (093)920392 (093)790392 pabajyan@mail.ru Հավատարմագրման վկայագիր
 № 042/T - 042 Հավատարմագրման վկայագիրը ուժի մեջ է մինչև 24.02.2019 թ.

Հաստատում եմ
 «Փ. Աբաջյան» ՍՊԸ
 Տնօրեն՝ *Փ. Աբաջյան* Փ. Աբաջյան
 « 07 » 12 2018 թ.



ՓՈՐՁԱՐԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07 - 126

Արտադրանքի անվանումը ասֆալտբետոնե խառնուրդ / Հանուկներ /

Տեղեկություն ՆՓ- ի մասին՝ ՊՕՍՏ 9128-2013

ՆՓ - ի նշագիրը

Փորձարկվող նմուշների քանակը 3 նմուշ , N 18 - 1398 , N 18 - 1399 , N 18 - 1400

(Նմուշի քանակը , համարը)

Նմուշների ստացման թվականը 06.12.2018

Նմուշները փորձարկման ներկայացնողը «Կոմպասս» գիտահետազոտական , կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ

Ներկայացնողի անվանումը

Օբյեկտի անվանումը ք. Գյումրի Մուշ թաղամաս

Փորձարկումների կատարման վայրը _____

Հրաջիվում է , եթե փորձարկումը կատարվում է բարրատրոխայից դուրս /

ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հ/Հ	Նմուշի համարը	Հաստություն սմ	Հանուկի քաշը / գրամ /			միջին խտությունը գ/սմ³	վերականգնարարական նմուշի միջին խտությունը գ/սմ³	խտացման գործակից
			օդում	Ջրում 30ր. պահելուց հետո օդում	ջրում			
1	18 - 1398	5,8	833,69	453.34	391.24	2.131	2.147	0.992
2	18 - 1399	5,0	1062,01	567.54	494.47	2.115	2.147	0.985
3	18 - 1400	4,1	544,59	291.16	253.43	2.133	2.147	0.993
Ընդլայնված անորոշությունը		-	-	-	-	-	-	-

* Նմուշները վերցված են պատվիրատուի կողմից

Եզրակացություն. ասֆալտբետոնե հանուկ
 Արտադրանքի անվանումը

փորձարկման նմուշները համապատասխանում են (չեն համապատասխանում)

ՊՕՍՏ 9128-2013 ի պահանջներին

ՆՓ - ի նշագիրը և կետերի համարները

Արձանագրությունը կազմված է՝ մեկ էջից երկու օրինակով:

Պատասխանատու կատարողներ՝ *Ս. Մանուկյան* Ս. Մանուկյան

ստորագրությունը Ա.Ն.Ա.

ՓԼ-ի ղեկավար՝ *Վ. Եղիազարյան* Վ. Եղիազարյան

ստորագրությունը Ա.Ն.Ա.

Սույն փորձարկման արձանագրությունը չի կարելի մասնակիորեն արտատպել կամ վերարտադրել, առանց ՓԼ - ի գրավոր թույլտվության:



«Փ. Աբաջյան» ՍՊԸ ՀՀ Երևան, Աջափնյակ Գ - 1 թաղ. 2/24, հեռ. (060)650392
 (093)920392 (093)790392 pabajyan@mail.ru Հավատարմագրման վկայագիր
 № 042/ T - 042 Հավատարմագրման վկայագիրը ուժի մեջ է մինչև 24.02.2019 թ.

Հաստատում եմ
 «Փ. Աբաջյան» ՍՊԸ
 Տնօրեն՝ *Փ. Աբաջյան* Փ. Աբաջյան
 « 07 » 12 2018 թ.



ՓՈՐՁԱՐԿԱՍԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07 - 127

Արտադրանքի անվանումը ասֆալտբետոնե խառնուրդ / Հանուկներ /

Տեղեկություն ՆՓ- ի մասին՝ ՊՕՍՏ 9128-2013
 ՆՓ - ի նշագիրը

Փորձարկվող նմուշների քանակը 3 նմուշ , N 18 - 1401 , N 18 - 1402 , N 18 - 1403
 (Նմուշի քանակը , համարը)

Նմուշների ստացման թվականը 06.12.2018

Նմուշները փորձարկման ներկայացնողը «Կոմպասս» գիտահետազոտական , կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ
 Ներկայացնողի անվանումը

Օբյեկտի անվանումը ք. Գյումրի Կոմիտաս փողոց

Փորձարկումների կատարման վայրը -
Արաջիում է , երե փորձարկումը կատարվում է լաբորատորիայից դուրս /

ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հ/Հ	Նմուշի համարը	Հաստություն սմ	Հանուկի քաշը / գրամ /			միջին ընդհանուր խտությունը գ/մ ³	վերադասարարական նմուշի միջին խտությունը գ/մ ³	խտացման գործակից
			օդում	Ջրում 30ր. պահելուց հետո օդում	ջրում			
1	18 - 1401	6,3	917.45	930.05	533.57	2.314	2.325	0.995
2	18 - 1402	6,2	911.67	923.34	529.53	2.315	2.325	0.996
3	18 - 1403	6,2	910.22	926.60	530.34	2.297	2.325	0.988
Ընդլայնված անորոշությունը		-	-	-	-	-	-	-

* Նմուշները վերցված են պատվիրատուի կողմից

Եզրակացություն. ասֆալտբետոնե խառնուկ
 Արտադրանքի անվանումը

փորձարկման նմուշները համապատասխանում են (չեն համապատասխանում)

ՊՕՍՏ 9128-2013 ի պահանջներին
 ՆՓ - ի նշագիրը և կետերի համարները

Արձանագրությունը կազմված է՝ մեկ էջից երկու օրինակով:

Պատասխանատու կատարողներ՝ *Ս. Մանուկյան* Ս. Մանուկյան
 ատորագրությունը Ա.Ա.Ա

ՓԼ-ի ղեկավար՝ *Վ. Եղիազարյան* Վ. Եղիազարյան
 ատորագրությունը Ա.Ա.Ա

Սույն փորձարկման արձանագրությունը չի կարելի մասնակիորեն արտատպել կամ վերարտադրել առանց ՓԼ - ի գրավոր թույլտվության:
 1/1

ԲԱԺԻՆ 4. ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ. ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

4.1 Առանցքային խմբի աշխատանքի սկզբունքները

Մասնակցային մոնիտորինգի արդյունքում բացահայտված խնդիրների լուծումն այն առանցքային նպատակներից է, որին ուղղված է ծրագիրը: Այս նպատակով ձևավորվել է առանցքային խումբ, որի նպատակն էր ուսումնասիրել առկա իրավիճակի պատճառները և առաջարկել խնդիրների լուծման հնարավոր ուղիներն ու հետամուտ լինել անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը: Փողոցաշինության աշխատանքների որակի ապահովման նպատակով կազմված առանցքային խմբում ներգրավված են եղել ոլորտի փորձագետները և ոլորտի պատասխանատու անձինք: Խմբում ներառվել են նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտում գործող շահագրգիռ մասնավոր կառույցների և խնդրով հետաքրքրված ՔՀԿ-ի ներկայացուցիչներ՝ հասարակության շահերը պաշտպանելու և ըստ անհրաժեշտության պատասխանատու անձանց վրա ճնշում գործադրելու նպատակով:

2018թ. հոկտեմբերի 15-ին տեղի է ունեցել առանցքային խմբի առաջին հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են մոնիտորինգային պլանը և հետագա աշխատանքների կազմակերպումը: Առանցքային խումբը պատասխանատու է եղել մոնիտորինգային պլանի քննարկման, քաղաքացի-մոնիթորների համախմբման աջակցության, ինչպես նաև մոնիտորինգի պլանի իրականացումը վերահսկելու համար: Առանցքային խմբի անդամները միաժամանակ հանդիսացել են վերահսկողներ կամ ուղղորդողներ (coach) մոնիտորինգային թիմերի համար:

Նկար 9. Առանցքային խմբի հանդիպում



Փողոցների կառուցման որակի վերահսկման համատեքստում առանցքային խումբն ունեցել է հետևյալ պարտականությունները.

Նախամոնիտորինգային գործողությունների պլանավորում և իրականացում

- Մոնիտորինգի գործիքի և մոնիտորինգի մեթոդաբանության կառուցվածքի վերանայում և վերջնականացում
- Քաղաքացի-մոնիթորների հետ տեղեկատվական հանդիպման և խորհրդատվության անցկացում:

Մոնիտորինգի իրականացում

- Մոնիտորինգի ժամանակացույցի վերահսկում
- Մոնիթորների տեղակայման վերահսկում

- Մոնիտորինգի զեկույցների ուսումնասիրում:

Հետմոնիտորինգային գործողությունների իրականացում

- Մոնիտորինգի արդյունքների ուսումնասիրություն
- Հետադարձ կապի և խնդրի լուծման նպատակով ժողովների կազմակերպում
- Մոնիտորինգի արդյունքների ներկայացում համապատասխան մարմիններին:

Ընդհանուր առմամբ, մոնիտորինգային խմբի և առանցքային խմբի աշխատանքներն իրականացվել են ըստ ստորև բերված աղյուսակի քայլերի հերթականության:

Աղյուսակ 12. Մոնիտորինգային և առանցքային խմբերի քայլերի հերթականություն

<p>Քայլ 1. Մոնիթորների այցելություն շինարարության վայր</p> <ul style="list-style-type: none"> • Մոնիթորներն ըստ մոնիտորինգային պլանի իրականացնում են հերթական այցելությունը ընտրված փողոցներում • Մոնիթորները լրացնում են մոնիտորինգային ստուգաթերթը և լուսանկարում տարածքը • Եթե ժամանակացույցով սահմանված է՝ իրականացնում են հարցումներ շինարարական աշխատանքներում ներգրավված բանվորների հետ • Շինարարության վայրում արձանագրված նորմատիվային անհամապատասխանությունները և բացթողումները արձանագրվում են և քննարկվում ծրագրի համակարգողների հետ • Լրացված ստուգաթերթերը մուտքագրվում են տվյալների բազա
<p>Քայլ 2. Տվյալների կրկնակի ստուգում</p> <ul style="list-style-type: none"> • Անհրաժեշտության դեպքում արձանագրված շեղումները և բացթողումները վերստուգվում են ծրագրի համակարգողի և/կամ տեխնիկական փորձագետի կողմից
<p>Քայլ 3. Բացահայտված խնդիրների բարձրաձայնում</p> <ul style="list-style-type: none"> • Արձանագրված խնդիրները քննարկվում են առանցքային խմբի հանդիպումների ընթացքում • Ծրագրի համակարգողների կողմից բացահայտված խնդիրների և թերությունների վերաբերյալ շինարարական կազմակերպությանը և Գյումրիի քաղաքապետարանին ուղարկվում են պաշտոնական նամակներ
<p>Քայլ 4. Խնդիրների լուծում և արձանագրում</p> <ul style="list-style-type: none"> • Հաջորդ մոնիտորինգային այցելության ընթացքում մոնիթորները առանձահատուկ ուշադրություն են դարձնում նախորդ այցելության ընթացքում արձանագրված թերությունները վերացմանը: Չլուծված լինելու դեպքում խնդիրները կրկին բարձրաձայնվում են առանցքային խմբում • Հաշվարկվում են մոնիտորինգային ցուցանիշները ընթացիկ ժամանակահատվածի համար:

4.2 Հանրային քննարկումներ և առաջարկությունների ներկայացում

Մոնիտորինգային այցերի արդյունքում բացահայտված խնդիրների բարձրաձայնման և լուծման հնարավոր ուղիների քննարկման համար «Կոմպասս» կենտրոնի կողմից 2018թ. հոկտեմբերի 19-ին կազմակերպվել է Հանրային քննարկում՝ «Գյումրու փողոցաշինության ծրագրի իրավիճակը, խնդիրները և հնարավոր լուծումները» թեմայով:

Հանրային քննարկմանը մասնակցել են ոլորտի խնդիրներով մտահոգ շուրջ 50 քաղաքացիներ, անհատ փորձագետներ, շինարարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Շիրակի մարզպետարանի, Գյումրու համայնքապետարանի և ավագանու խմբակցությունների ներկայացուցիչներ:

Նկար 10. «Կոմպաս» կենտրոնի կողմից կազմակերպված Հանրային քննարկում



Հանրային քննարկման ընթացքում հնչած բազմաթիվ մտահոգությունների ու կարծիքների արդյունքում «Կոմպաս» կենտրոնը խնդիրներն առանձնացրեց ըստ հետևյալ խմբերի.

1. Քաղաքացիների՝ վարորդների և հետիոտների տեղաշարժը քաղաքում խոչընդոտում են շինարարության վայրերում կուտակված աղբի կույտերը:
2. Մայթերի հիմնանորոգման ընթացքում հետիոտների համար չեն ստեղծվում այնպիսի հարմարանքներ կամ շրջանցող ճանապարհներ, որոնք կապահովեն վերջիններիս անվտանգ տեղաշարժը:
3. Հաշմանդամություն ունեցող անձանց համար բացակայում են պայմանները (թեքահարթակներ, կամրջակներ և այլն)՝ վերջիններիս ազատ և անվտանգ տեղաշարժման համար:
4. Խաթարված է քաղաքում գործող մի շարք առևտրային, հասարակական, կրթական կառույցներում ամենօրյա աշխատանքը՝ փողոցաշինության աշխատանքների պատճառած անհարմարությունների պատճառով:
5. Ձգձգվող շինարարական աշխատանքները վնասում են քաղաքի ներգնա զբոսաշրջությանը (չնայած զբոսաշրջիկների թիվը 2018-ին Գյումրիում աճել էր, սակայն բազմաթիվ տուրիստական գործակալություններից փոխանցվում են այցելող զբոսաշրջիկներից ստացված դժգոհություններ՝ քաղաքում մեծ քանակության փոշու առկայության և անանցանելի փողոցների, մայթերի առումով):

Ներկայացված խնդիրների լուծման համար արվել են հետևյալ **առաջարկությունները**.

1. Ստեղծել փողոցաշինության բնագավառի օպերատիվ խումբ, որը կարձագանքի քաղաքացիների հիմնավոր դժգոհություններին, ողջամիտ ժամկետներում լուծումներ կառաջարկի շինարարական կազմակերպությունների կողմից նախագծերով չնախատեսված և ի հայտ եկած խնդիրներին: Օպերատիվ խմբի կազմում նպատակահարմար է ներառել ոլորտի տեղական, անհրաժեշտության դեպքում նաև դրսից հրավիրված փորձագետների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև Ծրագրի Սուբյեկտից՝ Գյումրու համայնքապետարանից և Վարկառուից՝ ՀՀ ֆինանսների

նախարարությունից ներկայացուցիչների, ովքեր մշտապես իրազեկ կլինեն առաջացած խնդիրների վերաբերյալ, և յուրաքանչյուրն իր մասով համապատասխան շտկման աշխատանքներ կիրականացնի:

2. Հանրային հաշվետվողականության ապահովման և իրազեկման նպատակով հանրությանն ավելի հասանելի եղանակներով իրազեկել, ծանուցել, թե տվյալ ժամանակահատվածում որտեղ է նախատեսվում իրականացնել շինաշխատանքներ և որքան է այն տևելու:

3. Շինարարական աշխատանքների ընթացիկ պլանավորումն իրականացնել արդյունավետ և նախապես մշակված սցենարով՝ կանխատեսելի և իրատեսական դարձնելով աշխատանքների մեկնարկի, ընթացքի և ավարտման ժամկետները:

4. Ծրագրի իրականացման որակի վերահսկման գործառույթն իրականացնել պատշաճ կերպով՝ ապահովելով հանրության համար թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները, կամ այդ գործառույթը պատվիրակել մեկ այլ մարմնի:

Եզրահանգումներ

1. ՀՀ օրենսդրությամբ ճանապարհաշինական աշխատանքների որակի վերահսկման հստակ մեխանիզմներ ամրագրված չեն, դրանք թողնված են նախագծային փաստաթղթերի կարգավորմանը:
2. Ճանապարհաշինական աշխատանքների իրականացման ընթացքում բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը: Այստեղ առկա է շահերի բախման և սուբյեկտիվ դատողության գործոն, քանի որ աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը համարվում է թվարկված պայմանների և՛ իրականացնողը, և՛ հսկողը:
3. Մոնիտորինգի անցկացման դրությամբ ընտրված հինգ փողոցներում շինարարական նորմատիվները, որոնք նշված են եղել մոնիտորինգային ստուգաթերթում, հիմնականում պահպանված են եղել, առանձին փողոցներում եղել են շեղումներ, որոնք, սակայն, էական ազդեցություն չեն ներկայացնում որակի վրա: Մակայն արձանագրվել են այնպիսի շեղումներ, որոնց վերաբերյալ մոնիտորինգի ստուգաթերթում նորմատիվներ նշված չեն եղել, և քաղաքացի-մոնիթորները դրանք արձանագրել են. Վ. Սարգսյան փողոցում, օրինակ, նոր տեղադրված մայթեզերերի առանձնացումը բետոնե շերտից՝ փշրվող բետոնի պատճառով: Զիվանու փողոցում շեղումներ են եղել հիմնական երթևեկելի մասի երկշերտ ասֆալտաբետոն փռելիս շերտերի հաստությունների նորմերի պահպանման մասով, որտեղ շեղումը կազմել է 5-6 սմ: Իրականացված մյուս չափումների արդյունքում նորմատիվները կա՛մ պահպանված են եղել, կա՛մ գերազանցել են սահմանված նվազագույն շեմերը:
4. Ըստ շինարարության հրապարակներում ներգրավված աշխատակիցների հետ հարցումների՝ ստացված արդյունքներն, ընդհանուր առմամբ, եղել են դրական. աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման և դրանց վերաբերյալ հրահանգավորման ստացման, աշխատանքային ժամերի բաշխվածության վերաբերյալ հարցումները ցույց են տվել, որ դրանք եղել են պահպանված:
5. Շինարարական աշխատանքների կազմակերպման ընթացքում մեքենաների երթևեկությանը և հետիոտնի անվտանգ տեղաշարժին ուղղված միջոցառումների իրականացումը պատշաճ կերպով չի ապահովվել, ճանապարհաշինական աշխատանքների իրականացման ընթացքում ճանապարհները նորմատիվային պահանջներին համապատասխան չեն կահավորվել:
6. Շինաշխատանքների ընթացքում արված դիտարկումները ցույց են տվել, որ շինանյութերի և թափոնների տեղափոխումն իրականացվել է բաց (չձածկված) թափքերով, սակայն սա համարվում է խախտում և վնաս հասցնում մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին:
7. Շինարարական հրապարակներում փոշու առկայությունը մթնոլորտ արտանետումների կազմի նորմերից բարձր է:
8. Քաղաքացիների՝ վարորդների և հետիոտների տեղաշարժին խոչընդոտել են շինարարության վայրերում կուտակված աղբի կույտերը: Մայթերի հիմնանորոգման ընթացքում հետիոտների համար չեն ստեղծվել այնպիսի հարմարանքներ կամ շրջանցող ճանապարհներ, որոնք կապահովեին վերջիններիս անվտանգ տեղաշարժը: Հաշմանդամություն ունեցող անձանց ազատ և անվտանգ

տեղաշարժի առումով բացակայել են համապատասխան պայմանները՝ թեքահարթակներ, կամրջակներ և այլն:

9. Լայնածավալ շինարարական աշխատանքների ընթացքում Գյումրի քաղաքում խաթարվել է գործող մի շարք առևտրային, հասարակական, կրթական կառույցների ամենօրյա աշխատանքը: Սակայն «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրով անդրադարձ է կատարվել այս հանգամանքին և նշվել, որ գործընթացը կկազմակերպվի այնպես, որ քաղաքի բնականոն կյանքը չխաթարվի:
10. «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրով նշված չորս փողոցներում շինաշխատանքները նախատեսված էր ավարտել տվյալ ժամկետներում, թեև Գյումրու համայնքապետարանը նշված վերջնաժամկետներին ևս 60-70 օր ավելացնելու հնարավորություն է ունեցել:

Փողոցի անվանում	Կապալառու կազմակերպություն	Շինաշխատանքների կատարման	
		Սկիզբ	Ավարտ
Երևանյան խճուղի	«Մերձնուկոլյան» ԲԲԸ	24.07.2018	18.02.2019
Գ. Նժդեհի	«Սիսիանի ԲՈՒՍ» ՍՊԸ «Վահագն և Սամվել» ՍՊԸ	24.07.2018	18.02.2019
Վ. Սարգսյան	«ԱԱԲ պողեկտ» ՍՊԸ «Էլեկտրասերվիս» ՍՊԸ	02.08.2018	27.02.2019
Ջիվանու (Շիրազի փողոցից մինչև Ռուսթավելի փողոց)	«Մերձնուկոլյան» ԲԲԸ	04.07.2018	02.01.2019

Ժամկետների պահպանման նպատակով Գյումրու համայնքապետարանը կապալառու կազմակերպությունների հետ տարել է համապատասխան աշխատանքներ, սակայն եղանակային պայմաններից ելնելով՝ նախանշված ժամկետները կարող են երկարացվել: Կարելի է եզրակացնել, որ առնվազն նշված 4 փողոցներում շինարարական աշխատանքների ավարտի նախանշված ժամկետները (նաև երկարաձգված ժամկետները) չեն պահպանվի:

11. 2018թ. ընթացքում ձգձգված շինարարական աշխատանքները բացասական անդրադարձ են ունեցել քաղաքի ներգնա զբոսաշրջության վրա (չնայած զբոսաշրջիկների թիվը 2018թ. Գյումրիում աճ է գրանցել), բազմաթիվ տուրիստական գործակալություններից փոխանցվել են այցելող զբոսաշրջիկներից ստացված դժգոհություններ՝ քաղաքում մեծ քանակության փոշու առկայության և անանցանելի փողոցների, մայթերի առումով:
12. Գյումրիում հիմնանորոգված «Կոմիտաս» և «Մուշ 2 թաղամաս տանող» փողոցների ասֆալտաբետոնե ծածկից վերցվել են հանուկներ, և դրանք ենթարկվել են լաբորատոր փորձաքննության՝ անկախ փորձագիտական ընկերությունում: Ընդհանուր առմամբ, ասֆալտաբետոնե ծածկից վերցված երկու հանուկներն էլ համապատասխանել են ԳՕՍՍ 9128-2013-ի պահանջներին, և էական շեղումներ ու նորմատիվային խախտումներ չեն հայտնաբերվել:
13. Նվազել են ճանապարհաշինության ոլորտում աշխատանքների իրականացման համար համայնքային բյուջեից հատկացվող միջոցների թե՛ տեսակարար կշիռները, թե՛ բացարձակ ցուցանիշները: Սա կարելի է պայմանավորել ՎՋԵԲ-ի կողմից Գյումրիում ճանապարհաշինական աշխատանքների համար վարկային ֆինանսավորմամբ: Դինամիկայում նվազել են ն՝ վարչական, ն՝ ֆոնդային բյուջեներին հատկացվող միջոցները:
14. Առկա է էական տարբերություն Գյումրի համայնքի պլանավորված և փաստացի բյուջեների միջև, ավելին, անտրամաբանական է 2018թ պլանավորված ցուցանիշը և դրա կատարողական տոկոսը՝ 9

ամիսների համար 41%, ինչը վկայում է ոլորտում բյուջետային պլանավորման ոչ արդյունավետության մասին:

15. Համայնքի բյուջեում ոլորտում ձևավորված պարտքերը մարվել են հաջորդ տարում նույն հոդվածով ծախս դուրս գրելու արդյունքում: Թեպետ սա մասնագիտական սխալ չի համարվում, բայց բյուջեն արհեստականորեն ուռճացվում է՝ նախորդ տարվա պարտքերի հաշվին, և իրականում համայնքում համապատասխան արժեք չի ստեղծվում:
16. Թվերի համադրությամբ երևում է, որ ճանապարհների ընթացիկ նորոգման համար 1մ² տարածքի դիմաց կատարված ծախսը նվազել է 2016թ.՝ 6,9%-ով, 2017թ.՝ 10,8%-ով, 2018թ.՝ 14,6%-ով:
Կապիտալ նորոգման համար 1մ² տարածքի համար կատարված ծախսը 2016թ նվազել է 13%-ով, 2017թ. 14%-ով աճել է, իսկ 2018թ. կրկին նվազել է 14,6%-ով:
17. Ուսումնասիրության արդյունքում երևում է, որ «Մերձնուկուվյան» ԲԲԸ հետ 2015-2016թթ. կնքված պայմանագրերում երկու տարում էլ միջինից բարձր գին է սահմանվել:
18. Դիտարկված ժամանակահատվածում 27 փողոցներ չորս տարի անընդմեջ ընթացիկ նորոգման են ենթարկվել, իսկ 15-ը՝ երեք տարի անընդմեջ: 4 տարի անընդմեջ ընթացիկ նորոգված ճանապարհներից 3-ը 2015թ. հիմնանորոգման են ենթարկվել՝ 2-ը «Մերձնուկուվյան» ԲԲԸ կողմից, 1-ը՝ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ կողմից: Իսկ 2018թ. կրկնակի նորոգման է ենթարկվել ընթացիկ նորոգման ենթարկված փողոցների 13%-ը:

Առաջարկություններ

Իրավական կարգավորումների բարելավման վերաբերյալ

1. Քանի որ ՀՀ օրենսդրությամբ ճանապարհաշինական աշխատանքների որակի վերահսկման հստակ մեխանիզմներ ամրագրված չեն, և դրանք թողնված են նախագծային փաստաթղթերի և պայմանագրերի կարգավորմանը, ՀՀ կառավարությանն առաջարկում ենք, անկախ պայմանագրերում դրանց ամրագրված լինելու փաստից, պետական և տեղական մասշտաբի ճանապարհաշինական աշխատանքներում օրենսդրությամբ ամրագրել ու առավել վերահսկելի դարձնել ճանապարհաշինական աշխատանքների որակի ստուգման գործընթացը, որպես որակի վերահսկող նշանակել շահերի բախում չունեցող կոլեգիալ մարմին, սահմանել որակի ստուգման հստակ մեթոդներ, հայտնաբերված խախտումների շտկման նվազագույն ժամկետներ և պատասխանատվության միջոցներ:

Շինարարական աշխատանքների կազմակերպման բարելավման վերաբերյալ

2. Քանի որ շինարարական աշխատանքների կազմակերպման ընթացքում մեքենաների երթևեկության և հետիոտնի անվտանգ տեղաշարժի համար իրականացվող միջոցառումները թերի են, Գյումրու համայնքապետարանը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի համապատասխան միջոցառումների իրականացմանը: Բացի այդ, շինանյութերի և թափոնների տեղափոխումն իրականացվում է չձածկված թափքերով, Գյումրու համայնքապետարանի կողմից անհրաժեշտ է վերահսկել այս գործընթացը և զգուշացնել շինարարական կազմակերպություններին, որպեսզի վերջիններս գործընթացն իրականացնեն բացառապես ծածկված թափքերով:
3. Քանի որ շինարարական հրապարկներում փոշու առկայությունը մթնոլորտ արտանետումների կազմի նորմերից բարձր է, անհրաժեշտ է իրականացնող շինարարական կազմակերպության կողմից օրվա ընթացքում կանխարգելիչ միջոցառումներ իրականացնել՝ տարածքի պարբերական ջրցանման միջոցով:
4. Շինարարական աշխատանքների կազմակերպման ընթացքում շինարարական կազմակերպությունը պետք է համահարթեցման աշխատանքներ կատարելու ժամանակ հետագա օգտագործմանը պիտանի հողային շերտը նախօրոք հանի և պահեստավորի հատուկ առանձնացված տեղամասերում:
5. Շինկազմակերպություններին առաջարկվում է շինարարական աշխատանքների կազմակերպման ընթացքում յուրաքանչյուր 100 մետր տարածության համար նախատեսել քաղաքացիների անվտանգ տեղաշարժն ապահովող հարմարանքներ կամ շրջանցիկ ճանապարհներ: Քանի որ հաշմանդամություն ունեցող անձանց համար բացակայել են թեքահարթակներն ու կամրջակները, վերջիններիս ազատ և անվտանգ տեղաշարժման համար ևս պետք է պայմաններ ապահովվեն:
6. Գյումրու համայնքապետարանին առաջարկվում է «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի իրականացման ընթացքում ստեղծել փողոցաշինության բնագավառի օպերատիվ խումբ, որը կարձագանքի քաղաքացիների հիմնավորված դժգոհություններին, ողջամիտ ժամկետներում լուծումներ կառաջարկի շինարարական կազմակերպությունների կողմից նախագծերով

չնախատեսված և ի հայտ եկած խնդիրներին: Օպերատիվ խմբի կազմում նպատակահարմար է ներառել ոլորտի տեղական և ազգային փորձագետների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև Ծրագրի Վարկառու համարվող ՀՀ ֆինանսների նախարարությունից ներկայացուցիչների: «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի պահանջով նախկինում ստեղծվել է համանման աշխատանքային խումբ, սակայն դրա գործունեությունը էական արդյունքներ չի գրանցել և դրա կազմն ընտրվել է ոչ մասնակցային եղանակով:

7. Հանրային հաշվետվողականության ապահովման և իրազեկման նպատակով հանրությանն ավելի հասանելի եղանակներով իրազեկել և ծանուցել, թե տվյալ ժամանակահատվածում որ տարածքում է նախատեսվում իրականացնել շինաշխատանքներ և որքան է այն տևելու՝ քաղաքի բնակիչներին և առևտրային, հանրային սննդի, կրթական, մշակութային օբյեկտների բնականոն աշխատանքը չխոչընդոտելու համար: Բացի այդ, շինարարական աշխատանքների ընթացիկ պլանավորումն անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ և նախապես մշակված սցենարով՝ կանխատեսելի և իրատեսական դարձնելով աշխատանքների մեկնարկի, ընթացքի և ավարտի ժամկետները: Անհրաժեշտության դեպքում շինարարական կազմակերպությունների հետ կնքել լրացուցիչ պայմանագրեր, որոնցով խստիվ վերահսկողության կսահմանվի վերջիններիս աշխատանքների կատարման ժամանակացույցի ու ժամանակի օգտագործման արդյունավետության նկատմամբ:

Ճանապարհաշինության ուղղությամբ համայնքի բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման վերաբերյալ

8. Քանի որ ֆինանսական վերլուծությունը ցույց տվեց, որ Գյումրու համայնքային բյուջեի պլանավորումը ճանապարհաշինական աշխատանքների ուղղությամբ իրականացվում է թերի, առաջարկում ենք պլանավորումն անելիս հիմք ընդունել նախապես արված մոնիտորինգի արդյունքում քարտեզագրված փողոցները: Անհրաժեշտ է հստակեցնել բյուջեի հնգամյա և տարեկան պլանավորման մեթոդները, հնգամյա զարգացման ծրագրում ներառել նորոգվող փողոցների ցանկն ըստ նորոգման ծավալների, իսկ տարեկան բյուջեի նկարագրականում նշել ծավալները:
9. Անհրաժեշտ է չնվազեցնել համայնքային բյուջեից ոլորտին հատկացվող ծախսերը: ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում հիմնանորոգվելու են 32 փողոցներ: Հարկ է անուշադրության չմատնել քաղաքի մյուս փողոցները՝ միաժամանակ հստակեցնելով գործընթացի կառավարման ընթացակարգը:
10. Համաձայն սույն ուսումնասիրության՝ երեք փողոցներ հիմնանորոգումից հետո ենթարկվել են ընթացիկ նորոգումների: Անհրաժեշտ է որակի վերահսկողություն իրականացնել հիմնանորոգվող փողոցներում՝ մոնիտորինգների կամ լաբորատոր փորձաքննությունների միջոցով:
11. Անհրաժեշտ է լաբորատոր փորձաքննություններ իրականացնել «Մերձմոսկովյան» ԲԲԸ և «Դուստր Մոնիկա» ՍՊԸ կողմից հիմնանորոգված փողոցներում: Անհամապատասխանության դեպքում (որն արդեն իսկ ապացուցվել է սույն ուսումնասիրությամբ) վերանայել հետագա համագործակցության նպատակահարմարությունը:

12. Անհրաժեշտ է համայնքի բյուջեի միջոցներով կատարվող ճանապարհաշինական աշխատանքներում կարևորել որակը՝ անկախ գնի մատչելիությունից: Այսպիսի մոտեցումը կապահովի երկարաժամկետ արդյունք և կկանխի հետագա ֆինանսական ծախսերը:

Վերջաբան

Մույն աշխատանքն ուղղված է Գյումրի քաղաքում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից տրված վարկային միջոցների շրջանակներում իրականացվող փողոցաշինության աշխատանքների որակի բարձրացմանը՝ սահմանված նորմերին ու չափանիշներին համապատասխանությունը վերահսկելու միջոցով: Այդ նպատակով իրականացվել են ՀՀ և միջազգային օրենսդրության և իրավական կարգավորումների ուսումնասիրություն, մոնիտորինգային աշխատանքներ, հարցումներ շինարարական հրապարակներում ներգրավված աշխատակիցների շրջանում, ասֆալտաբետոնե շերտի որակի ստուգման նպատակով լաբորատոր փորձաքննություն և Գյումրի համայնքի բյուջեի հաշվին վերանորոգվող փողոցների ուղղությամբ կատարվող ծախսերի արդյունավետության վերլուծություն:

Մասնավորապես, մոնիտորինգի համար ընտրվել են Գյումրիում հիմնանորոգվող՝ Վազգեն Մարգարյան, Գարեգին Նժդեհի, Մուշ 2 թաղամաս տանող հատված, Երևանյան խճուղի և Ջիվանու՝ թվով 5 փողոցները: Հարցման են ենթարկվել շինհրապարակներում ներգրավված 50-ից ավելի աշխատակիցներ: Լաբորատոր փորձաքննության են ենթարկվել Գյումրիում հիմնանորոգված 2 փողոցներից՝ Կոմիտասի և Մուշ 2 թաղամաս տանող հատվածից վերցված ասֆալտաբետոնի շերտի հանուկները: Գյումրու համայնքային բյուջեից 2015-2018թթ. ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերի արդյունավետությունը բացահայտելու համար ուսումնասիրվել են համայնքային բյուջեի մի շարք ֆինանսական ցուցանիշներ:

Մոնիտորինգը ցույց տվեց, որ ընտրված հինգ փողոցներում շինարարական նորմատիվները, որոնք նշված են եղել մոնիտորինգային ստուգաթերթում, հիմնականում պահպանված են եղել, առանձին փողոցներում եղել են շեղումներ, որոնք, սակայն, էական ազդեցություն չեն ունեցել որակի վրա:

Սակայն լուրջ բացթողումներ կան շինարարական աշխատանքների կազմակերպման գործընթացում, խնդրահարույց է նաև իրականացվող աշխատանքների որակի վերահսկման գործընթացը: Շեղումներ կան շինաշխատանքների կատարման ժամանակացույցերում, որից բխում են մի շարք անհարմարություններ Գյումրու բնակիչների համար:

Ելնելով ծրագրի արդյունքում բացահայտված խնդիրներից՝ կատարվել են մի շարք եզրահանգումներ, մշակվել են ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկներ, որոնք ներկայացվել են Գյումրու համայնքապետարանին՝ 2019թ. իրականացվելիք շինարարական աշխատանքներում դրանք հաշվի առնելու նպատակով: Այն առաջարկները, որոնք Գյումրու համայնքային բյուջետային միջոցներից ծախսեր են ենթադրում, կներկայացվեն նաև համայնքի 2020թ. բյուջեի նախագծի քննարկման ժամանակ:

Առաջարկների փաթեթ է ներկայացվել նաև Գյումրիում շինարարական աշխատանքներ իրականացնող 3 շինկազմակերպություններին՝ իրենց աշխատանքների կազմակերպումն ու որակը բարելավելու նպատակով:

Հավելված 1. Մոնիտորինգային ստուգաթերթ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՏՈՒԳԱԹԵՐԹ N__

Մշտադիտարկման իրականացման ամսաթիվը	
Մշտադիտարկման իրականացման ժամերը	__: __ -ից __: __
Մշտադիտարկող խումբ	
Մշտադիտարկման ենթարկված փողոց	
Մշտադիտարկման ենթարկված փողոցի հատվածն ըստ հարևանությամբ գտնվող շենքերի/տների համարների	
<p>Q1. Ի՞նչ տիպի շինարարական աշխատանքներ էին իրականացվում փողոցի նշված հատվածում մոնիտորինգային այցի ընթացքում</p> <p><input type="checkbox"/> Հիմնական երթևեկելի մասում հողային հիմքի ամրացում</p> <p><input type="checkbox"/> Հիմնական երթևեկելի մասում ասֆալտապատում</p> <p><input type="checkbox"/> Ջրահեռացման վաքերի կառուցում</p> <p><input type="checkbox"/> Մայթերի մակերևույթի ասֆալտապատում</p> <p><input type="checkbox"/> Մայթերի մակերևույթի սալարկում</p> <p><input type="checkbox"/> Եզրաքարերի տեղադրում</p> <p><input type="checkbox"/> Ճանապարհային նշանների վերատեղադրում</p> <p><input type="checkbox"/> Գծանշումների անցկացում</p> <p><input type="checkbox"/> Այլ, խնդրում ենք նշել _____</p>	
<p>Q2. Ի՞նչ տիպի ասֆալտապատման աշխատանքներ էին իրականացվում</p> <p><input type="checkbox"/> Միաշերտ ասֆալտաբետոնե</p> <p><input type="checkbox"/> Երկշերտ ասֆալտաբետոնե</p> <p><input type="checkbox"/> N/A</p>	<p>Q3. Ի՞նչ տիպի մայթեր էին կառուցվում</p> <p><input type="checkbox"/> Միաշերտ ասֆալտաբետոնե</p> <p><input type="checkbox"/> Երկշերտ ասֆալտաբետոնե</p> <p><input type="checkbox"/> Սալարկներ</p> <p><input type="checkbox"/> N/A</p>

1. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Հիմնական երթևեկելի մասի ասֆալտապատում

N	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Նախագծով սահմանված մեծություններ (ըրացվում է տեխնիկական մասնագետի կողմից)	Իրականացված չափումներ
1.1 Չափում 1. Որքան էին փոփոգ ասֆալտի շերտերի հաստությունները		Խճային հիմք	20 սմ	սմ	սմ
		Բետոն B15	15 սմ	սմ	սմ
		Խճային հիմք բիտումի տարածումով	10 սմ	սմ	սմ
		Բազալտե սալարկում	12 սմ	սմ	սմ
		Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	սմ	սմ
1.2 Չափում 2. Որքան էին փոփոգ ասֆալտի շերտերի հաստությունները		Խճային հիմք	20 սմ	սմ	սմ
		Բետոն B15	15 սմ	սմ	սմ
		Խճային հիմք բիտումի տարածումով	10 սմ	սմ	սմ
		Բազալտե սալարկում	12 սմ	սմ	սմ
		Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	սմ	սմ
1.3 Չափում 3. Որքան էին փոփոգ ասֆալտի շերտերի հաստությունները		Խճային հիմք	20 սմ	սմ	սմ
		Բետոն B15	15 սմ	սմ	սմ
		Խճային հիմք բիտումի տարածումով	10 սմ	սմ	սմ
		Բազալտե սալարկում	12 սմ	սմ	սմ
		Մանրահատիկ ասֆալտաբետոն	3 սմ	սմ	սմ
Մեկնաբանություններ/ նկատառումներ					
Մայթերի կառուցում					

N	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Նախագծով սահմանված մեծություններ (լրացվում է տեխնիկական մասնագետի կողմից)	Իրականացված չափումներ
1.4 Չափում 1. Որքան էր կառուցվող մայթի շերտերի հաստությունը		խճային հիմք	5 սմ	սմ	սմ
		Բետոն B15	10 սմ	սմ	սմ
		Ասֆալտաբետոնե շերտ	5 սմ	սմ	սմ
1.5 Չափում 2. Որքան էր կառուցվող մայթի շերտերի հաստությունը		խճային հիմք	5 սմ	սմ	սմ
		Բետոն B15	10 սմ	սմ	սմ
		Ասֆալտաբետոնե շերտ	5 սմ	սմ	սմ
1.6 Չափում 3. Որքան էր կառուցվող մայթի շերտերի հաստությունը		խճային հիմք	5 սմ	սմ	սմ
		Բետոն B15	10 սմ	սմ	սմ
		Ասֆալտաբետոնե շերտ	5 սմ	սմ	սմ
Մեկնաբանություններ/ նկատառումներ					
Եզրաքարերի տեղադրում					
N	Չափորոշիչ	Շերտեր	Նորմատիվային մեծություններ	Նախագծով սահմանված մեծություններ (լրացվում է տեխնիկական մասնագետի կողմից)	Իրականացված չափումներ
1.7 Չափում 1. Որքան էին կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները		Խիճ (հաստություն)	5 սմ	սմ	սմ
		Բետոն (հաստություն)	10 սմ	սմ	սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	սմ	սմ
1.8 Չափում 2. Որքան էին կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի հաստությունները և լայնությունները		Խիճ (հաստություն)	5 սմ	սմ	սմ
		Բետոն (հաստություն)	10 սմ	սմ	սմ
		Բետոն (լայնություն)	30 սմ	սմ	սմ
1.9 Չափում 3. Որքան էին կառուցվող մայթի եզրաքարերի ստորին շերտերի		Խիճ (հաստություն)	5 սմ	սմ	սմ
		Բետոն (հաստություն)	10 սմ	սմ	սմ

հաստությունները և լայնությունները		Բետոն (լայնություն)	30 սմ	սմ	սմ
N	Չափորոշիչ		Նորմատիվային մեծություններ	Նախագծով սահմանված մեծություններ (լրացվում է տեխնիկական մասնագետի կողմից)	Իրականացված չափումներ
	1.10 Չափում 1. Որքա՞ն էր եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտբետոնից վերև եղած հատվածը		13-17 սմ	սմ	սմ
	1.11 Չափում 2. Որքա՞ն էր եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտբետոնից վերև եղած հատվածը		13-17 սմ	սմ	սմ
	1.12 Չափում 3. Որքա՞ն էր եզրաքարի՝ երթևեկելի մասի ասֆալտբետոնից վերև եղած հատվածը		13-17 սմ	սմ	սմ
	1.13 Արդյոք նոր տեղադրվող եզրաքարերի թվում առկա էին վնասված և ոչ պիտանի եզրաքարեր		1. Այո 2. Ոչ		
	1.14 Արդյոք նոր իրականացվող մայթերի սալիկների թվում առկա էին վնասված և ոչ պիտանի սալիկներ		1. Այո 2. Ոչ		
Մեկնաբանություններ/ նկատառումներ					
Ասֆալտի ջերմաստիճան					
Չափորոշիչ	Չափման օբյեկտ		Նորմատիվային մեծություններ	Իրականացված չափումներ	
1.15 Որքա՞ն էր ասֆալտի ջերմաստիճանը համաձայն չափումների:	Չափում ինքնաթափ մեքենայի թափքում		min 130°C – max 160°C	°C	
	Չափում նոր ձուլող ասֆալտի համար		min 130°C – max 160°C	°C	
Մեկնաբանություններ/ նկատառումներ					

2. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Անվտանգության նորմերի պահպանություն: Երթևեկության անվտանգություն	
2.1 Արդյոք աշխատանքների կատարման ընթացքում տեղադրված են եղել ժամանակավոր ճանապարհային նշաններ	1. Այո 2. Ոչ 3. Մասամբ
2.2 Արդյոք երթևեկելի մասի ասֆալտապատման աշխատանքների համար ապահովվե՞լ է միակողմանի երթևեկություն համապատասխան ճանապարհային նշաններով	1. Այո 2. Ոչ
2.3 Արդյոք շինարարական աշխատանքների պատճառով փողոցի երկու կողմերում առաջացել էին մեքենաների խցանումներ	1. Այո 2. Ոչ
2.4 Արդյոք հետիոտների անվտանգ երթևեկության համար իրականացվել էին միջոցառումներ (մուտքի արգելքներ, ժամանակավոր կամրջակների տեղադրում և այլն)	1. Այո 2. Ոչ
2.5 Արդյոք աշխատակիցներից որևէ մեկը կարգավորում էր մեքենաների երթևեկությունը և հետիոտների շարժը շինարարական տեխնիկայի տեղաշարժի ժամանակ	1. Այո 2. Ոչ 3. N/A
Մեկնաբանություններ/ նկատառումներ	
Անվտանգության նորմերի պահպանություն: Աշխատանքային անվտանգություն	
2.6 Արդյոք աշխատանքներում ներգրավված անձիք կրում էին արտահագուստ	1. Այո 2. Ոչ 3. Մասամբ
2.7 Արդյոք աշխատանքներում ներգրավված անձիք կրում էին պաշտպանիչ ձեռնոցներ և սաղավարտներ	1. Այո 2. Ոչ 3. Մասամբ
2.8 Արդյոք տեխնիկական վերահսկիչ կազմակերպության ներկայացուցիչը ներկա էր շինհրապարակում	1. Այո 2. Ոչ
Մեկնաբանություններ/ նկատառումներ	

Անվտանգության նորմերի պահպանություն:Բնապահպանական անվտանգություն	
2.9 Արդյոք շինարարության հրապարակում տարածված էր շինարարական փոշի	1. Այո 2. Ոչ
2.10 Արդյոք շինարարության տարածքում կուտակված էր կենցաղային և շինարարական աղբ (քանդված ասֆալտաբետոն, եզրաքարե սյուներ, նշաններ):	1. Այո 2. Ոչ
2.11 Արդյոք շինանյութերն ու թափոնները տեղափոխվում էին ծածկված թափքով մեքենաներով	1. Այո 2. Ոչ
Մեկնաբանություններ/ նկատառումներ	

Հավելված 2. Շինարարության հրապարակում ներգրավված աշխատակիցների հետ հարցման հարցաթերթ

Հարցաթերթ N _

Ամիս/ամսաթիվ _ / _ / 2018թ.

Շինարարության հրապարակ _____

Q1. Երբևէ ստացել եք աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորում:

1. Այո 2. Ոչ

Q2. Ե՞րբ եք վերջին անգամ ստացել աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորումը

1. Այսօր առավոտյան
2. Նախորդ երեք օրերի ընթացքում
3. Նախորդ մեկ շաբաթվա ընթացքում
4. Վերջին երկու շաբաթվա ընթացքում
5. Վերջին մեկ ամսվա ընթացքում
6. Չեմ ստացել դեռևս

Q3. Ի՞նչ պարբերականությամբ եք ստանում աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ հրահանգավորումը

1. Ամեն օր
2. Երկուսից երեք օրը մեկ անգամ
3. Շաբաթը մեկ անգամ
4. Երկու շաբաթը մեկ անգամ
5. Ամիսը մեկ անգամ
6. Տեղյակ չեմ/դեռևս չեմ ստացել

Q4. Օրական քանի՞ ժամ եք աշխատում շինարարության հրապարակում՝ __ ժամ

Q5. Արդյո՞ք շինհրապարակում ապահովված եք մաքուր խմելու ջրով:

1. Այո 2. Ոչ

Q6. Արդյո՞ք կարողանում եք օգտվել պատշաճ սանհանգույցներից:

1. Այո 2. Ոչ

Q7. (Եթե արտահագուստ չի կրում) Արդյո՞ք գործատու կազմակերպության կողմից ստացել եք արտահագուստ:

1. Այո 2. Ոչ

Q8. *(Եթե չի կրում սաղավարտ կամ ձեռնոցներ)* Արդյո՞ք գործատու կազմակերպության կողմից ստացել եք անհատական պաշտպանական միջոցներ (սաղավարտ, ձեռնոցներ):

1. Այո
2. Ոչ

Q9. Արդյո՞ք պահպանվում են ճաշի ընդմիջման ժամերը:

1. Այո
2. Ոչ

Q10. Ինչպե՞ս եք հոգում ընդմիջման կազմակերպման հետ կապված ծախսերը:

1. Ընդմիջման ծախսերը հոգում է գործատուն
2. Ընդմիջման ծախսերը հոգում ենք մենք մեր սեփական միջոցներով
3. Երբեմն ընդմիջումը տրվում է գործատուի կողմից, երբեմն կազմակերպում ենք մենք

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

Հավելված 3. Մոնիտորինգի ուղեցույց

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՅՑ ԵՎ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻ ԼՐԱՑՈՒՄ

Ուսումնասիրության ոլորտ 1.

Հիմնական երթուղիների մասի ասֆալտապատում

Մոնիտորինգային ստուգաթերթի այս մասում, մենք ուսումնասիրում ենք, թե որքանով են պահպանված ներհամայնքային ճանապարհների վերակառուցման գործող չափորոշիչները: Այդ նպատակով մենք իրականացնում ենք նոր կառուցվող ճանապարհային պատվածքի շերտերի հաստությունների չափում:

Գործող նորմատիվային պահանջներ

Ավտոճանապարհների իրականացման սկիզբը հողային պաստառի կառուցումն է: **Հողային պաստառը** օտարման շերտի այն մասն է, որտեղ կատարվում են հողային աշխատանքները (երթուղիների մասի, կողնակների, կողային առուների, լիցքի և հանույթի շեղերի մակերեսները միասին): Հողային պաստառի կառուցումից հետո կառուցվում են **երթուղիների մասի շերտերը**: Ճանապարհային պատվածքները կարող են բաղկացած լինեն մեկ կամ մի քանի շերտերից: Երթուղիների մասը կարող է պատված լինել **միաշերտ ասֆալտաբետոնով կամ երկշերտ ասֆալտաբետոնով**, որոնց շերտերի հաստությունը ներկայացված է ստորև՝

Միաշերտ ասֆալտաբետոնե ավտոճանապարհ

Երկշերտ ասֆալտաբետոնե ավտոճանապարհ

ա) Ավազակոպճային շերտը տեղական բնական նյութերով ամրացված գրունտային շերտն է: Այս շերտի հաստությունը կազմում է երթուղիների մասի ընդհանուր շերտի հաստության 30-40%-ը

ա) և բ) շերտերի հաստությունները նույնն են, ինչ միաշերտ ասֆալտաբետոնե ճանապարհի դեպքում:

բ) Խճային հիմքը կազմված է խճային նախաշերտից և բիտումով տոգորված խճային հիմքից: Խճային նախաշերտի հաստությունը կազմում է երթուղիների մասի ընդհանուր շերտի հաստության 25-30%-ը: Խճային հիմքի հաստությունը կազմում է ընդհանուր հաստության 20-25%-ը

գ) Ստորին շերտը կազմում է **խոշորահատիկ ասֆալտաբետոնե շերտը**, վերին շերտը՝ **մանրահատիկ ասֆալտաբետոնե շերտը**: Ստորին և վերին շերտերի հաստությունը միասին կազմում են երթուղիների մասի ընդհանուր շերտի հաստության 18-25%-ը: Եթե վերին շերտը ստորին շերտի վրա տեղադրվում է երկու օրվա ընթացքում, ապա ստորին շերտի վրա մշակում չի պահանջվում: Իսկ եթե ստորին շերտի տեղադրումից հետո անցնում է երկու օրից ավելի, ապա ստորին շերտը մաքրվում է փոշուց, ապա կատարվում է մշակում բիտումային էմուլսիայով:

գ) Միաշերտ ասֆալտաբետոնը երթուղիների մասի վերին շերտն է (մանրահատիկ): Այս շերտի հաստությունը կազմում է երթուղիների մասի ընդհանուր շերտի հաստության 12-25%-ը:

Երթուղիների մասի շերտերի նվազագույն հաստությունները ներկայացված են Աղյուսակ 1-ում. ավազակոպճային շերտի և խճային նախաշերտի նվազագույն հաստությունները սահմանված են 10 սմ, բիտումի տարածումով խճային հիմքի և խոշորահատիկ ասֆալտաբետոնե շերտերի նվազագույն հաստությունները՝ 6 սմ, իսկ մանրահատիկ ասֆալտաբետոնե շերտի նվազագույն հաստությունը սահմանված է 3 սմ:

Շերտեր	Նվազագույն հաստություն
1. Ավազակոպիճ	- h min= 10 սմ
2. Խճային նախաշերտ	- h min=10 սմ
3. Խճային հիմք բիտումի տարածումով	- h min= 6 սմ
4. Խոշորահատիկ ասֆալտաբետոն	- h min= 6 սմ
5. Մանրահատիկ ասֆալտաբետոն	- h min= 3 սմ

Ուսումնասիրության ոլորտ 2.

Ասֆալտի ջերմաստիճան

Մոնիտորինգային ստուգաթերթի այս մասում մենք չափում ենք նոր իրականացվող ասֆալտի ջերմաստիճանը հատուկ ջերմաչափ սարքի միջոցով: Չափումն իրականացնում ենք երկու անգամ՝ մեկը ասֆալտահատիկով բեռնված ինքնաթափ մեքենայի թափքում, մյուսը՝ նոր փռված ասֆալտի համար: Ստացված տվյալները լրացնում ենք ստուգաթերթի համապատասխան բաժնում:

Ուսումնասիրության ոլորտ 3.

Մայթերի կառուցում

Մոնիտորինգային ստուգաթերթի այս մասում մենք ուսումնասիրում ենք, թե որքանով են պահպանված ներհամայնքային ճանապարհների վերակառուցման գործող չափորոշիչները: Այդ նպատակով մենք իրականացնում ենք նոր կառուցվող մայթերի պատվածքի շերտերի հաստությունների չափում: Եթե մայթերը սալարկվում են և ոչ թե ասֆալտապատվում, մենք նաև դիտարկում ենք՝ արդյոք նոր իրականացվող մայթերի սալիկների թվում առկա էին վնասված և ոչ պիտանի սալիկներ՝ այդ մասին համապատասխան գրառում անելով ստուգաթերթում:

Գործող նորմատիվային պահանջներ

Մայթերի լայնությունը սահմանվում է 1-2,4 մետր: Մայթերի կառուցման համար հեռացվում են քայքայված ասֆալտի շերտը և ստորին շերտերը: Հեռացվում են ստորին բերրի հողի (սև հողի) շերտերը: Դրանից հետո կատարվում է խճային շերտի՝ 10-15 սմ հաստությամբ, ապա ասֆալտաբետոնե շերտի (ավազային ասֆալտբետոն)՝ 3-4 սմ հաստությամբ տեղակայումը:

Շերտեր	Նվազագույն հաստություն
Խճային կամ ավազակոպճային շերտ	- h min =10-15 սմ
Ասֆալտաբետոնե շերտ	- h min =3-4 սմ

Ուսումնասիրության ոլորտ 4.

Եզրաքարերի տեղադրում

Մոնիտորինգային ստուգաթերթի այս մասում մենք ուսումնասիրում ենք, թե որքանով են պահպանված ներհամայնքային ճանապարհների վերակառուցման գործող չափորոշիչները բազալտե եզրաքարերի տեղադրման ընթացքում: Այդ նպատակով մենք իրականացնում ենք նոր կառուցվող բազալտե եզրաքարերի տեղադրման չափում: Մենք դիտարկում ենք, թե արդյոք նոր տեղադրվող եզրաքարերի թվում առկա էին վնասված և ոչ պիտանի եզրաքարեր:


Գործող նորմատիվային պահանջներ

Եզրաքարի տակ լցվող բետոնը պետք է սև հողից առանձնանա առնվազն 5 սմ հաստությամբ խճային շերտով (Նկար 1): Եզրաքարը երթևեկելի մասի ասֆալտաբետոնից վերև պետք է երևա 13-17 սմ, իսկ մնացած մասը մնում է երթևեկելի մասի շերտերի տակ (Նկար 2):

- 1 - Բազալտե եզրաքարի տակ լցվում է բետոնե հիմք, որի հաստությունը 10 սմ է, լայնությունը՝ 30 սմ (Նկար 1): Բետոնե հիմքը լցվում է եզրաքարերը տեղադրելուց առնվազն մեկ օր առաջ:
- 2 - Բազալտե եզրաքարի հետևի մասում լցվում է բետոնե եզրաքարի ամրացման համար (Նկար 1), որի հաստությունը 10 սմ է, բարձրությունը՝ 15 սմ. գործողությունը կատարվում է եզրաքարերը շարելուց հետո:

Նկար 1. Բազալտե եզրաքարեր

Նկար 2. Եզրաքարերի տեղադրումը երթևեկելի մասի նկատմամբ



Ուսումնասիրության ոլորտ 3.

Շինարարական աշխատանքների կազմակերպում

Մոնիտորինգային ստուգաթերթի այս մասում մենք ուսումնասիրում ենք, թե որքանով են պահպանված շինարարության կազմակերպման անվտանգության նորմերը: Այդ նպատակով մենք իրականացնում ենք դիտարկում շինարարության հրապարակում և լրացնում ենք մոնիտորինգային ստուգաթերթի համապատասխան բաժինը: Դիտարկման ենթակա հարցերը ներկայացված են ստորև.

Դիտարկման ենթակա

ոլորտներ

Անվտանգության նորմերի

պահպանություն

Երթևեկության

անվտանգություն

Դիտարկման հարցեր

- Արդյո՞ք աշխատանքների կատարման ընթացքում տեղադրված են եղել ժամանակավոր ճանապարհային նշաններ:
- Արդյո՞ք երթևեկելի մասի ասֆալտապատման աշխատանքների համար ապահովվել է միակողմանի երթևեկություն՝ համապատասխան ճանապարհային նշաններով:
- Արդյո՞ք շինարարական աշխատանքների պատճառով փողոցի երկու կողմերում առաջացել էին մեքենաների խցանումներ:
- Արդյո՞ք հետիոտների անվտանգ երթևեկության համար իրականացվել

**Անվտանգության նորմերի
պահպանություն
Աշխատանքային
անվտանգություն
Անվտանգության նորմերի
պահպանություն
Բնապահպանական
անվտանգություն**

Էին միջոցառումներ (մուտքի արգելքներ, ժամանակավոր կամրջակների տեղադրում և այլն):

- Արդյո՞ք աշխատակիցներից որևէ մեկը կարգավորում էր մեքենաների երթևեկությունը և հետիոտների շարժը շինարարական տեխնիկայի տեղաշարժի ժամանակ:

- Արդյո՞ք աշխատանքներում ներգրավված անձինք կրում էին արտահագուստ:

- Արդյո՞ք աշխատանքներում ներգրավված անձինք կրում էին պաշտպանիչ ձեռնոցներ և սաղավարտներ:

- Արդյո՞ք շինարարության հրապարակում տարածված էր շինարարական փոշի:

- Արդյո՞ք շինարարության տարածքում կուտակված է եղել կենցաղային և շինարարական աղբ (քանդված ասֆալտաբետոն, եզրաքարե սյուներ, նշաններ):

- Արդյո՞ք շինանյութերն ու թափոնները տեղափոխվում էին ծածկված թափքով մեքենաներով:

Հավելված 4. Մոնիտորինգի ենթարկված հինգ փողոցների տեղանքների քարտեզ

Երևանյան խճուղի











«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ
Ք. Գյումրի, Անկախության հրապ. 9^ա շ., 3-րդ հարկ, 301 սենյակ
Հեռ.՝ (+374) 312 6 01 00, (+374) 95 16 01 00, Էլ. փոստ՝ compassgyumri@gmail.com
Կայքէջ՝ <http://compass-center.org>

Ուսումնասիրությունն իրականացվել է
«Մասնակցային մոնիտորինգ՝ հանուն բարեկարգ և որակյալ
ճանապարհների Գյումրիում» ծրագրի շրջանակներում

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ
Ք. Գյումրի, Անկախության հրապ. 9ա շ., 3-րդ հարկ, 301-303 սեն.
Հեռ.՝ (+374) 312 6 01 00, (+374) 95 16 01 00, Էլ. փոստ՝ compassgyumri@gmail.com
Կայքէջ՝ <http://compass-center.org>